48134

ԿՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀՌՈՎՄԻ

ԿԱՄ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ԿՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԻՍՖԱՀԱՆ (Նոր-Ջուղա)

ԿԱԹՈՂԻԿԱՅԻ ՏՊԱՐԱՆ "ԼԱԶԱՐԻՍ"

1914

48134

ԱՐՈՒԵՍՅԱՆ ՄԻՇԵԼՈՎՄԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՅԱԳՐՅԱԿԱՆ

ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀՌՈՎՄԻ

ԿԱՄ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Քրիստոնէական-Հեղինակ

երգարանէան — օգրկ

IMPRIMATUR:

ISPAHAN (Djoulfa), le 25 janvier 1914.

† E. SONTAG, Archevêque d'Ispahan,

Délégué apostolique.

IMPRIMATUR:
ISPAHAN (Djoulfa
le 25 janvier 1914
+ E. SONTAG, Archevê
que d'Ispahan,
Délégué apostolique

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՂԱՇ
ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ

ԳԼՈՒԽ — Ա.

ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՒԱՏՔԻ ԳԼԽԱՒՈՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Հ. Խաչակնքիր քեզ։

Պ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն։

Հ. Ո՞վ է ստեղծել քեզ։

Պ. Աստուած է ստեղծել ինձ։

Հ. Աստուած ինչ վախճանի համար է ստեղծել քեզ։

Պ. Աստուած ստեղծել է ինձ, որ Իրան ճանաչեմ, սիրեմ ու ծառայեմ այս աշխարհում և յետոյ ց՛միշտ Նրան վայելեմ միւսում։

Հ. Աստուած ով է:

Պ. Աստուած ամենակատարեալ էակն է երկնի և երկրի Ստեղծողն ու Տէրը:

Հ: Միայն մէ՞կ Աստուած կայ:

Պ. Այո, միայն մէկ Աստուած կայ:

Հ. Աստուած որտեղ է:

Պ. Աստուած՝ երկինքը, երկիրը և ամեն տեղ է:

Հ. Աստուած տեսնում է ամեն բան:

Պ. Այո, Աստուած տեսնում է ամեն բան, նաև մեր խորհուրդները:

Հ. Աստուած միշտ եղե՞լ է:

Պ. Աստուած միշտ եղել է, և միշտ էլ պիտի լինի, որովհետև յաւիտենական է:

Հ. Աստուած մեզի պէս մարմին ունի:

Պ. Աստուած մարմին չ'ունի. որովհետև մի ամենապարզ հոգի է:

Հ. Աստուած քանի՞ Անձ ունի:

Պ. Աստուած ունի Երեք միմեանցից իրապէս Զանազան Անձեր:

Հ. Ի՞նչպէս են կոչւում աստուածային Երեք Անձերը:

Պ. Աստուածային երեք Անձերը կոչւում են՝ ՀԱՅՐ, ՈՐԴԻ և ՍՈՒՐԲ ՀՈԳԻ:

Հ. Ամենասուրբ Երրորդութեան Անձերը

հաւասա՞ր են միմեանց թէ անհաւասար:

Պ. Ամենասուրբ Երրորդութեան Անձերը կատարելապէս հաւասար են միմեանց որովհետև միևնոյն էութիւնը կամ աստուածային բնութիւնն ունին:

Հ. Աստուածային երեք անձերից ո՞րը մարդ եղաւ:

Պ. Աստուածային երեք Անձերից մարդ եղաւ երկրորդն, այսինքն՝ ՈՐԴԻՆ:

Հ. Աստուծու Որդին ինչպէս մարդ եղաւ:

Պ. Աստուծու Որդին մարդ եղաւ Ս. Կոյս Մարիամի ամենամաքուր արգանդի մէջ, Սուրբ Հոգու զօրութեաբը, մեր հոգու ու մարմնի պէս մարմին ու հոգի առնելով:

Հ. Ի՞նչպէս է կոչւում Աստուծու մարդ եղած Որդին:

Պ. Աստուծու մարդ եղած Որդին կոչւում է Յիսուս Քրիստոս:

Հ. Ո՞վ է ուրեմն Յիսուս Քրիստոս:

Պ. Յիսուս Քրիստոսն Աստուծու մարդացեալ Որդին է:

Հ. Աստուծու Որդին ինչու համար մարդ եղաւ:

Պ. Աստուծու Որդին մարդ եղաւ մեզ փրկելու համար:

Հ. Ի՞նչ ասել է «մեզ փրկելու համար։»

Պ. «Մեզ փրկելու համար» ասել է մեղքից ու դժոխքից մեզ ազատելու և արքայութեան փառքին արժանացնելու համար։

Հ. Ի՞նչ են վայելում արքայութեան մէջ։

Պ. Արքայութեան մէջ վայելում են ընդ միշտ Աստուծու մշտնջենական տեսութիւնը և ամեն բարիք, առանց որ և է մի չարիք կրելու։

Հ. Աստուած ո՞ւմ է տալիս արքայութիւնը։

Պ. Աստուած արքայութիւնն իբրև պարգև տալիս է նրանց՝ որ սիրում ու ծառայում են Իրան այս աշխարհում։

Հ. Ի՞նչ են կրում դժոխքի մէջ։

Պ. Դժոխքի մէջ զրկւում են ց՝միշտ Աստուծու տեսութիւնից, կրում են յաւիտենական կրակի և ամեն տեսակ չարիքների պատիժներն, առանց երբէք որ և է մի մխիթարութիւն ունենալու։

Հ. Որո՞նք են դատապարտւում դժոխքին։

Պ. Նրանք են դատապարտւում դժոխքին որոնք չեն ուզում այս կեանքիս մէջ ծառայել ու սիրել Աստուծուն, և անդեղջ են մեռնում։

Հ. Յիսուս Քրիստոս ի՞նչ է արել մեզ

փրկելու համար։

Պ. Յիսուս Քրիստոս մեզ փրկելու համար չարչարւել է ու խաչի վրայ մեռել։

Հ. Յիսուս Քրիստոս Իւր մահուանից յետոյ յարութիւն առա՞ւ։

Պ. Յիսուս Քրիստոս Իւր մահուանից երեք օր յետոյ, փառաւոր ու յաղթական յարութիւն առաւ և էլ չի մեռնել։



ԳԼՈՒԽ Բ.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍԵՐԸ

Հ. Որոնք են քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր մասերը։

Պ. Քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր մասերը չորս են՝ Հաւատամքը, Հայր մերը Պատուիրաններն ու Խորհուրդները

Հ. Սա՛ Հաւատամքը։

Պ. 1. Հաւատամ յԱստուած Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի։

2. Եւ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս. յՈրդի նորա միածին։

3. Որ յղացաւ 'ի Հոգւոյն Սրբոյ, ծնաւ 'ի Մարիամայ Կուսէն։

4. Զարշարեցաւ ընդ Պոնտացւով Պիղատոսիւ, խաչեցաւ, մեռաւ, և թաղեցաւ։

5. Էջ ի դժոխս, յերրորդ աւուր յարեաւ ի մեռելոց։

6. Համբարձաւ յերկինս, նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենակալի։

7. Ուստի գալոց է 'ի դատել զկենդանիս և զմեռեալս։

8. Հաւատամ 'ի Սուրբ Հոգին։

9. 'Ի սուրբ կաթուղիկէ Եկեղեցի, 'ի հաղորդութիւն Սրբոց։

10. 'Ի թողութիւն մեղաց։

11. 'Ի յարութիւն մարմնոց։

12. 'Ի կեանս յաւիտենականս. ամէն։

Հ. Սա՛ Հայր մեր-ը։

Պ. Հայր մեր՝ որ յերկինս ես,

1. Սուրբ եղիցի անուն Քո։

2. Եկեսցէ՝ արքայութիւն Քո։

3. Եղեցին կամք Քո, որպէս յերկինս և երկրի։

4. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։

5. Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։

6. Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն։

7. Այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։

8. Զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Հ. Բացի Հայր մեր-ից չկա՞յ մի ուրիշ աղօթք։

Պ. Բացի Հայր մեր-ից կայ նաև Ողջոյն Քեզ Մարիամ-ը, որով ողջունում և աղօթում ենք Ամենասուրբ Կուսին։

Հ. Սա՛ Ողջոյն Քեզ Մարիամ-ը։

Պ. Ողջոյն Քեզ Մարիամ, լի շնորհօք. Տէր ընդ Քեզ, օրհնեալ ես Դու 'ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի Քո Յիսուս։ Սրբուհի Մարիամ, Մայր Աստուծոյ աղօթեա՛ վասն մեր մեղաւորացս, այժմ և 'ի ժամու մահուան մերոյ, ամէն։

Հ. Բացի Ողջոյն Քեզ Մարիամ-ից կա՞յ նաև մէկ ուրիշ աղօթք։

Պ. Բացի Ողջոյն Քեզ Մարիամ-ից, կայ նաև Ո՛ղջ լեր Թագուհին։

Հ. Սա՛ Ողջ լեր Թագուհին։

Պ. Ո՛ղջ լեր Թագուհի Մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն և յոյս մեր, ողջ լեր։ Առ Քեզ կոչեմք աքսորեալ որդիքս Եւայի, առ Քեզ հառաչեմք. հեծելով և ողբալով յայսմ արտասուաց վայրի։ Արդ աղէ, ո՛վ բարեխօս մեր, դարձո՛ առ մեզ զաչս ողորմութեան Քո։ Եւ զՅիսուս զօրհնեալ պտուղն որովայնի Քո յետ այսր աքսորանաց, ցոյց մեզ. ո՛վ գթած, ո՛վ բարեգութ, ո՛վ քաղցր Կոյս Մարիամ։

Հ. Ո՞ՐՆ է այն աղօթքը, որ անում ենք Ամենասուրբ Երրորդութեանը գովաբանելու համար։

Պ. Ամենասուրբ Երրորդութեանը գովաբանելու համար ասում ենք «Փառք Հօր-ը»։

Հ. Սա՛ Փառք Հօր-ը։

Պ. Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Հ. Քանի՞ և որո՞նք են Աստծու պատուիրանները։

Պ. Աստծու պատուիրանները տասն են՝ Ես եմ Տէր Աստուած քո։

1. Մի՛ ունիցիս զայլ աստուած առաջի իմ։
2. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն։
3. Յիշեա՛ զօր շաբաթուն սրբել զնա, այսինքն զկիւրակէս։
4. Պատուեա՛ զհայր քո և զմայր։
5. Մի՛ սպանաներ։
6. Մի՛ շնար։
7. Մի՛ գողանար։
8. Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ։
9. Մի՛ ցանկար կնոջ ընկերի քո։
10. Մի՛ ցանկար ամենայնի որ նորա է։

Հ. Քանի՞ և որո՞նք են Եկեղեցու պատուիրանները։

Պ. Եկեղեցու պատուիրանները հինգ են՝

1. Յաւուրս կիւրակէից և այլ հրամայեալ տօնից տեսանել զպատարագ:

2. Պահել զքառասնորդական և զայլ պահս և ծոմապահս հրամայեալս, և հրաժարել ի մսոյ և ի կթեղինաց յաւուրս արգելեալս:

3. Ի տարւոջ գոնէ մի անգամ խոստովանիլ և հաղորդիլ ի Զատկի յարութեան Տեառն ի ժողովրդապետական եկեղեցւոջ:

4. Տալ զտասանորդս Եկեղեցւոյ ըստ սովորութեան:

5. Մի առնել հարսանիս յաւուրս արգելեալս, այսինքն՝ ի յիսնակաց բարեկենդանէ մինչև ցվերջ Առաջաւորաց, ի բուն բարեկենդանէ մինչև ցվերջ ութօրէից Հոգեգալստեան և յաւուրս շաբաթապահոց:

Հ. Խորհուրդները քանի՞ և որո՞նք են:

Պ. Խորհուրդները եօթն են՝—1. Մկրտութիւն. 2. Դրոշմ. 3. Հաղորդութիւն. 4. Ապաշխարութիւն. 5. Վերջին օծում. 6. Կարգ Քահանայութեան. 7. Պսակ:

Հ. Որքա՞ն հաստատեցին այս խորհուրդները

Պ. Մեր Տէր Յիսուս Քրիստոսից հաստատեցին այս խորհուրդները:

ԳԼՈՒԽ Գ.

ՀԱՒԱՏՈՑ, ՅՈՒՍՈՅ, ՍՈՒՐՈՅ ԵՒ ԶՂՋՄԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Հ. Ասա՛ Հաւատոյ ներգործութիւնը:

Պ. Ես հաւատում եմ հաստատապէս, որովհետև Աստուած՝ անսխալ ճշմարտութիւնն, այսպէս է յայտնել Սուրբ կաթուղիկէ Եկեղեցուն ու նրա միջոցով մեզ էլ է յայտնում, թէ միայն մէկ Աստուած կայ և երեք Աստուածային Իրարու հաւասար ու Միմեանցից զանազան Անձեր. Որոնք կոչւում են՝ ՀԱՅՐ ՈՐԴԻ և ՍՈՒՐԲ ՀՈԳԻ. թէ Որդին Աստուած մարդ եղաւ՝ Սուրբ Հոգու զօրութեամբ՝ ամենամաքուր Կոյս Մարիամի որովայնում, մարդկային մարմին ու հոգի առնելով. մեզ համար խաչի վրայ մեռաւ, յարութիւն առաւ, երկինք եկաւ, այնտեղից պիտի գայ աշխարհիս վերջը, ամեն կենդանիներին ու մեռածներին դատաստան անելու՝ Բարիներին յաւիտենական արքայութիւն, ու Չարերին յաւիտենական դժոխք տալու:

Դարձեալ նոյն պատճառով հաւատում եմ այն ամեն բաներին, որոնց հաւատում ու սովորեցնում է նոյն Սուրբ Եկեղեցին։

Հ. Սա՛ Յուսոյ ներգործութիւնը։

Պ. Ո՛վ Աստուած իմ, որովհետև ամեն բանի կարող, անհուն բարի ու ողորմած ես, յոյս ունիմ որ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի չարչարանքների ու մահուան արդիւնքների համար, ինձ կը տաս յաւիտենական կեանքն, որը Դու՝ որ ամեն բանի մէջ հաւատարիմ ես, խոստացար տալու նրան, որ բարեպաշտ քրիստոնէի պէս ապրի, ինչպէս որ առաջադրում եմ այսուհետև ապրելու Քո Սուրբ օգնութեամբը։

Հ. Սա՛ Սիրոյ ներգործութիւնը։

Պ. Ո՛վ Աստուած իմ, որովհետև Դու գերագոյն ու կատարեալ բարի ես, սիրում եմ Քեզ բոլոր սրտով և ամեն բանից վեր, ու պատրաստ եմ ամեն բան կորցնելու, քան թէ Քեզ վշտացնելու. և Քո սիրոյն համար էլ սիրում և ուզում եմ սիրել ընկերոջս իմ անձիս պէս։

Հ. Սա՛ կատարեալ Զղջման ներգործութիւնը։

Պ. Ո՛վ Աստուած իմ, որովհետև Դու

անհուն բարի ես, ու Քեզ ամեն բանից վեր եմ սիրում, ճշմարիտ սրտով զղջում ու ցաւում եմ Քեզ վշտացնելուս համար, և առաջադրում եմ հաստատապէս Քո սուրբ օգնութեամբն էլ մեղք չը գործելու, և մասնաւորապէս մեղքի մերձաւոր առիթներից փախչելու։

Հ. Սա՛ անկատար ու կատարեալ Զղջման ներգործութիւնը։

Պ. Ո՛վ Աստուած իմ, անկեղծ սրտով ցաւում եմ Քեզ վշտացնելուս, զղջում եմ դրախտին արժանի լինելուս, արքայութիւնը կորցնելուս, բացի աւելի ևս մեղանչելով Քեզի պէս անչափ բարի ու մեծ Աստծուն վշտացնելուս համար։ Կուզէի Քեզ վշտացնելուցս առաջ մեռած լինել. առաջադրում եմ հաստատապէս էլ չը մեղանչելու, և մեղքի մերձաւոր առիթներից փախչելու։

Հ. Ուրիշ ո՞ր աղօթքով ենք ողջունում և օգնութեան կանչում Ամենասուրբ Կուսին։

Պ. Ո՛ղջ լեր թագուհի-ով ենք ողջունում և օգնութեան կանչում Ամենասուրբ Կուսին։

ՀԱՄԱՌՕՏ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ:

ՄԱՍՆ ՍԱՌԱՋԻՆ

ՀԱՒԱՏՔԻ ԳԼԽԱՒՈՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐ

Գլուխ Ա.

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՆՇԱՆԸ:

Հ. Դու Քրիստոնեա՞յ ես:

Պ. Այո՛, Աստուծու շնորհքով ես քրիստոնեայ եմ:

Հ. Ի՞նչ ասել է «քրիստոնեայ լինելը:»

Պ. «Քրիստոնեայ լինելը» ասել է Յիսուս Քրիստոսի հաւատքն ու օրէնքը դաւանել:

Հ. Ի՞նչպէս են քրիստոնեայ լինում:

Պ. Սուրբ Մկրտութեան միջոցով են քրիստոնեայ լինում:

Հ. Ո՞րն է քրիստոնէի նշանը:

Պ. Քրիստոնէի նշանը՝ սուրբ Խաչի նշանն է:

Հ. Ի՞նչ կերպով ես դու քեզ խաչակնքում:

Պ. Ես ինձ խաչակնքում եմ աջ ձեռքս դնելով նախ՝ ճակատիս վրայ և ասելով «Յանուն Հօր» ապա կրծքիս, ասելով՝ «Եւ Որդւոյ» յետոյ ձախ և աջ ուսիս, ասելով՝ «Եւ Հոգւոյն Սրբոյ» և ի վերջոյ ասում եմ «ամէն:»

Հ. Ինչու՞ համար Խաչի նշանը քրիստոնէի նշանն է:

Պ. Նրա համար Խաչի նշանը քրիստոնէի նշանն է, որովհետև քրիստոնեան նրանով է տարբերւում անհաւատներից:

Հ. Ինչ է նշանակում Խաչի նշանը:

Պ. Խաչի նշանը մեր սուրբ Հաւատքի գլխաւոր խորհուրդներն է նշանակում:

Հ. Որո՞նք են մեր սուրբ Հաւատքի գլխաւոր խորհուրդները:

Պ. Մեր սուրբ Հաւատքի գլխաւոր խորհուրդներն երկու են՝ 1. Աստծու Միութիւն ու Երրորդութիւնը. 2. Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարդեղութիւնը. Չարչարանքն ու Մահը:

Հ. Ինչ է նշանակում Աստծու Միութիւնը:

Պ. Աստծու Միութիւնը նշանակում է թէ միայն մէկ Աստուած կայ:

Հ. Ի՞նչ է նշանակում Աստծու Երրորդութիւնը։

Պ. Աստծու Երրորդութիւնը նշանակում է թէ Աստուած երեք Հաւասար ու Զանազան Անձեր ունի, Որոնք կոչւում են Հայր, Որդի և Սուրբ Հոգի։

Հ. Խաչի նշանով ինչպէս ենք ցոյց տալիս Աստծու Միութեան ու Երրորդութեան խորհուրդը,

Պ. Խաչի նշանով ցոյց ենք տալիս Աստծու Միութեան ու Երրորդութեան խորհուրդը, որովհետև Յանուն ասելով, հաստատում ենք թէ միայն մէկ Աստուած կայ, և ասելով «ի Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ,» հաստատում ենք թէ Աստուած երեք իրապէս Զանազան Անձեր ունի։

Հ. Ի՞նչ է նշանակում Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարդեղութիւնը, Զարչարանքն ու Մահը։

Պ. Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարդեղութիւնը, Զարչարանքն ու Մահը նշանակում է թէ Աստծու Որդին՝ մեզ փրկելու համար, մարդացաւ, չարչարուեց. ու խաչի վրայ մեռաւ։

Հ. Խաչի նշանով ինչպէս ենք ցոյց տալիս

48134

մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարդեղութեան, Զարչարանքների ու Մահուան խորհուրդը

Պ. Խաչի նշանով ցոյց ենք տալիս մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարդեղութեան, Զարչարանքների ու Մահուան խորհուրդը, որովհետև այս նշանը յիշեցնում է թէ՝ Աստծու մարդացեալ Որդին, չարչարուեց ու խաչի վրայ մեռաւ։

Հ. Օգտակա՞ր բան է յաճախ ինքն իրան խաչակնքելը։

Պ. Այո՛, շատ օգտակար է յաճախ ինքն իրան խաչակնքելը. որովհետև Խաչի նշանը կարող է արծարծել մեր հաւատքը, հեռացնել փորձութիւնները և Աստծուց բազմաթիւ շնորհքներ ընդունել մեզ համար։

Հ. Ե՞րբ լաւ է ինքն իրան խաչակնքել։

Պ. Լաւ է ինքն իրան խաչակնքել առաւօտեան՝ անկողնից վեր կենալիս, երեկոյեան՝ քնելիս, կերակրից և աշխատանքից առաջ ու վերջ, եկեղեցի մտնելիս և ելնելիս ու մասնաւորապէս ազօթելուց առաջ։

ՍԱՀՄՈՅԱՆ ՍԱՏ. ՄՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ

Գլուխ Բ.

ԱՍՏՑՈՒ ՄԻՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ:

Հ. Կարող ես դու հասկանալ, թէ ինչպէս Աստուածային երեք իրապէս զանազան Անձերը մի Աստուած են:

Պ. Ո՛չ, այս մի խորհուրդ է, որ չ'ենք կարող հասկանալ. որովհետև Աստուած անհուն է և անհասանելի. այլ պէտք է, որ հաւատանք այս բանին, որովհետև նոյն ինքն Աստուած է յայտնել:

Հ. Ինչպէս է կոչւում այս խորհուրդը:

Պ. Կոչւում է Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը:

Հ. Ի՞նչ ես հասկանում այս՝ «Ամենասուրբ Երրորդութիւն» խօսքերը:

Պ. Այս «Ամենասուրբ Երրորդութիւն» խօսքերից հասկանում եմ, թէ միայն մէկ Աստուած կայ երեք իսկապէս տարբեր Անձերով, որոնք կոչւում են՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի:

Հ. Ի՞նչ ասել է «Երեք իսկապէս տարբեր Անձեր»:

Պ. Ասել է թէ մէկ Անձ միւս Անձը չէ, այսինքը թէ Հայրն՝ Որդին չէ, Որդին՝ Սուրբ Հոգին չէ, և Սուրբ Հոգին՝ ոչ Հայրն է և ոչ էլ Որդին:

Հ. Ո՞րն է Ամենասուրբ Երրորդութեան առաջին Անձը:

Պ. Ամենասուրբ Երրորդութեան առաջին Անձը՝ Հայրն է:

Հ. Ո՞րն է Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ Անձը:

Պ. Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ Անձը՝ Որդին է:

Հ. Ո՞րն է Ամենասուրբ Երրորդութեան երրորդ Անձը:

Պ. Ամենասուրբ Երրորդութեան երրորդ Անձը՝ Սուրբ Հոգին է:

Հ. Ինչու համար Հայրն Ամենասուրբ Երրորդութեան առաջին Անձն է:

Պ. Նրա համար Հայրն Ամենասուրբ Երրորդութեան առաջին Անձն է, որովհետև մէկ ուրիշ Անձից չի բղխում, այլ միւս երկու Անձերի սկիզբն է:

Հ. Ինչու Որդին Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ Անձն է:

Պ. Որդին՝ Ամենասուրբ Երրորդութեան

երկրորդ Անձն է, որովհետև Հօրից է ծնեալ։

Հ. Ինչու՞ Սուրբ Հոգին Ամենասուրբ Երրորդութեան երրորդ Անձն է։

Պ. Սուրբ Հոգին Ամենասուրբ Երրորդութեան երրորդ Անձն է, որովհետև Հօրից ու Որդուց է բղխում։

Հ. Հայրն Աստուա՞ծ է։

Պ. Այո՛, Հայրն Աստուած է։

Հ. Որդին Աստուա՞ծ է։

Պ. Այո՛, Որդին Աստուած է։

Հ. Սուրբ Հոգին Աստուա՞ծ է։

Պ. Այո՛, Սուրբ Հոգին Աստուած է։

Հ. Եթէ իւրաքանչիւր Անձն Աստուած է, ուրեմն այս երեք Անձերն երե՞ք Աստուած են։

Պ. Ամենասուրբ Երրորդութեան երեք Անձերն երեք Աստուած չեն, այլ միայն մէկ Աստուած։

Հ. Ինչու՞ Ամենասուրբ Երրորդութեան երեք Անձերը միայն մէկ Աստուած են։

Պ. Ամենասուրբ Երրորդութեան երեք Անձերը միայն մէկ Աստուած են, որովհետև իւրաքանչիւր Անձը մի և նոյն Աստուածային միակ բնութիւնն ունի։

Հ. Այս երեք Անձերից ո՞րն է մեծագոյն, գօրագոյնը և իմաստնագոյնը։

Պ. Աստուածային երեք Անձերն էլ հաւասար են. որովհետև միևնոյն Աստուածային բնութիւնն ունենալով՝ նոյն է Իրանց կարողութիւնը, նոյն՝ իմաստութիւնը, և նոյն՝ բարութիւնը։

Հ. Հայրն՝ Որդուց ու Սուրբ Հոգուց առաջ չէ՞ր։

Պ. Հայրն՝ Որդուց ու Սուրբ Հոգուց առաջ չէր. որովհետև Աստուածային երեք Անձերն էլ հաւասարապէս յաւիտենական են։



Գլուխ Գ.

ԱՍՏԾՈՒ ՈՐԴՈՒ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ:

Հ. Ինչ է նշանակում Մարդեղութիւն բառը:

Պ. «Մարդեղութիւն» բառը նշանակում է թէ՝ Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ Անձն, այսինքն՝ Որդին մարդ եղաւ:

Հ. Աստծու Որդին ինչպէս մարդ եղաւ:

Պ. Աստծու Որդին մարդ եղաւ՝ Ս. Կոյս Մարիամի Ամենամաքուր որովայնի մէջ, մեր մարմնի ու հոգու նման մարմին ու հոգի առնելով Սուրբ Հոգու զօրութեամբը:

Հ. Աստծու Որդին մարդանալով Աստուած լինելուց դադարե՞ց:

Պ. Աստծու Որդին մարդանալով Աստուած լինելուց չդադարեց. այլ ճշմարիտ Աստուած մնալով, սկսեց նաև ճշմարիտ մարդ լինել:

Հ. Ինչպէս է կոչւում Աստծու մարդացեալ Որդին:

Պ. Աստծու մարդացեալ Որդին կոչւում է՝ Յիսուս Քրիստոս:

Հ. Յիսուս Քրիստոսը միշտ եղել է:

Պ. Յիսուս Քրիստոսն իբրև Աստուած՝ միշտ եղել է, իսկ իբրև մարդ՝ սկսեց լինել Մարդեղութեան վայրկեանից:

Հ. Ով է Յիսուս Քրիստոսի Հայրը:

Պ. Յիսուս Քրիստոսի Հայրը՝ միայն յաւիտենական Հայրն է. որովհետև Աստծու միածնոյն Որդին որ Աստուածային բնութեամբը ծնուել է Ամենասուրբ Երրորդութեան առաջին Անձից, մարդկային բնութեամբը ծնուեց Ս. Կոյս Մարիամից՝ Սուրբ Հոգու զօրութեամբը:

Հ. Ինչու համար Աստծու Որդին մարդ եղաւ:

Պ. Աստծու Որդին մարդ եղաւ մեզ փրկելու համար:

Հ. Մենք մեզանից չէինք կարող փրկուել, եթէ Աստծու Որդին Մարդ չը լինէր:

Պ. Մենք մեզանից չէինք կարող փրկուել, եթէ Աստծու Որդին Մարդ չը լինէր. որովհետև մեր նախահայր Ադամի մեղքի պատճառով գերի էինք դարձել սատանային, ու ցաւերի արքայութիւնից մերժուել:

Հ. Ո՞րն եղաւ Ադամի մեղքը:

Պ. Ադամի մեղքը՝ հպարտութեան և անհնազանդութեան մեղքն եղաւ:

Հ. Ադամի մեղքն ինչ վնասներ է պատճառել մեզ:

Պ. Ադամի մեղքի պատճառով, մենք զրկուեցինք Աստծու շնորհքից, ենթարկուեցինք տգիտութեան, դէպի չարը միտման, մահուան և այլ ամեն թշուառութիւններին:

Հ. Յիսուս Քրիստոսը ո՞րտեղ ծնուեց:

Պ. Յիսուս Քրիստոսը ծնուեց Բեթղեհէմ մի գոմում. և դրուեց մսուրի մէջ:

Հ. Յիսուս Քրիստոսն ինչո՞ւ համար սոդեց այնպէս աղքատ ծնուել:

Պ. Յիսուս Քրիստոսն ուզեց այնպէս աղքատ ծնուել՝ մեզ սովորեցնելու համար, որ մեր երջանկութիւնը չը դնենք այս աշխարհիս հարստութիւնների, պատուի ու հաճոյքների մէջ:

Հ. Յիսուս Քրիստոսն ինչ արեց Իւր մահկանացու կեանքի ընթացքում:

Պ. Յիսուս Քրիստոսն՝ Իւր մահկանացու կեանքի ընթացքում, խօսքով ու գործով սովորեցրեց արքայութեան ճանապարհը, հրաշքներով հաստատելով Իւր վարդապետութիւնը:

Հ. Յիսուս Քրիստոսն ինչ է արել մեզ փրկելու համար:

Պ. Յիսուս Քրիստոսը մեզ փրկելու համար, չարչարուել է ու խաչի վրայ մեռել:

Հ. Յիսուս Քրիստոսն իբրև Աստուա՞ծ մեռաւ, թէ իբրև մարդ:

Պ. Յիսուս Քրիստոսն իբրև մարդ մեռաւ. որովհետև իբրև Աստուած՝ ո՛չ կարող էր չարչարուել, և ո՛չ էլ մեռնել:

Հ. Յիսուս Քրիստոսի մեռնելուց յետոյ ինչ եղաւ Նրա մարմինը:

Պ. Յիսուս Քրիստոսի մեռնելուց յետոյ՝ Նրա մարմինը թաղուեց:

Հ. Իսկ Յիսուս Քրիստոսի Հոգին ո՞րտեղ գնաց՝ Իւր մահուանից յետոյ:

Պ. Յիսուս Քրիստոսի Հոգին, Իւր մահուանից յետոյ Լիմպոս իջաւ, Սուրբ Հայրերի այսինքն՝ Իրանից առաջ մեռած սուրբ մարդկանց հոգիները փրկելու համար:

Հ. Յիսուս Քրիստոսի Ամենասուրբ մարմինը քանի՞ օր մնաց գերեզմանի մէջ:

Պ. Յիսուս Քրիստոսի ամենասուրբ մարմինն երեք օր մնաց գերեզմանի մէջ, բայց ոչ ամբողջապէս, այսինքն՝ ուրբաթ օրուա մի մասն, ամբողջ շաբաթ օրը, մինչև կիւրակէի արշալոյսը, և ապա փառաւոր ու յաղթական կերպով յարութիւն առաւ և այլևս չի մեռնել:

Հ. Ինչ ասել է «յարութիւն առաւ»:

Պ. «Յարութիւն առաւ» ասել է թէ Յիսուս Քրիստոսի հոգին նորից միացաւ իւր մարմնի հետ։

Հ. Յիսուս Քրիստոսն իւր յարութիւնից յետոյ քանի՞ օր էլ մնաց երկրիս վրայ։

Պ. Յիսուս Քրիստոսն՝ իւր յարութիւնից յետոյ, քառասուն օր էլ մնաց երկրիս վրայ, իւր աշակերտներին հաւատքի մէջ հաստատելու համար։

Հ. Քառասուն օրից յետոյ Յիսուս Քրիստոսն ո՞ւր գնաց։

Պ. Քառասուն օրից յետոյ Յիսուս Քրիստոսը համբարձաւ երկինքը, ուր նստած է ամենակարող Հօր Աստծու աջակողմը։

Հ. Արդեօք Յիսուս Քրիստոսն երկնքից ուղարկե՞ց Սուրբ Հոգուն իւր Եկեղեցու համար։

Պ. Այո, Յիսուս Քրիստոսն երկնքից ուղարկեց Սուրբ Հոգուն իւր Եկեղեցու համար, Հոգեգալստեան՝ օրը, իւր Համբարձմանից տասն օր վերջը։

Հ. Յիսուս Քրիստոսը հիմայ միա՞յն երկնքումն է գտնուում։

Պ. Յիսուս Քրիստոսն իբրև Աստուած, ամեն տեղ է, իսկ իբրև Մարդ Աստուած երկնքումը և Ամենասուրբ Հաղորդութեան խորհրդի մէջ

Գլուխ Դ.

ԱՇԽԱՐՀԻՍ ԿԱՏԱՐԱԾԻՆ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼԵՍՏԵԱՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՎՐԱՅ։

Հ. Յիսուս Քրիստոսը տեսանելի կերպով էլի պիտի վերադառնա՞յ երկրիս վրայ։

Պ. Յիսուս Քրիստոսը տեսանելի կերպով էլի պիտի վերադառնայ երկրիս վրայ աշխարհիս կատարածին, կենդանիներին ու մեռածներին, այսինքն՝ բարիներին ու չարերին դատելու համար։

Հ. Յիսուս Քրիստոսն ի՞նչ բանի վրայօք պիտի դատէ մեզ։

Պ. Յիսուս Քրիստոսը պիտի դատէ մեզ մեր ամեն արած բարի ու չար գործերի վրայօք։

Հ. Մահուանից անմիջապէս յետոյ ի՞նչ պիտի լինի մեր հոգին։

Պ. Մահուանից անմիջապէս յետոյ մեր հոգին պիտի ներկայանայ Յիսուս Քրիստոսի ատեանը՝ իւր գործերի համարը տալու։

Հ. Ուրեմն երկու դատաստան տեղի պիտի ունենայ։

Պ. Այո, անտարակոյս, երկու դատաստան տեղի պիտի ունենայ, մինն՝ առանձնական, մահուանից անմիջապէս յետոյ, միւսն՝ ընդհանրական, աշխարհիս դատարածին։

Հ. Առանձնական դատաստանից յետոյ ինչ պիտի պատահի հոգուն։

Պ. Առանձնական դատաստանից յետոյ հոգին՝ եթէ Աստծու շնորքի մէջ գտնւի և չունենայ տուժելու մի պատիժ կգնայ արքայութիւն. եթէ մահուչափ մեղքի վիճակի մէջ լինի կգնայ դժոխք. իսկ եթէ շնորհքի վիճակի մէջ է, բայց տակաւին Աստուածային Արդարութեանը հատուցանելու մի պարտք ունենայ, արքայութիւն ընդունելուց առաջ, կգնայ քաւարան։

Հ. Ինչ է քաւարանը։

Պ. Քաւարանը քաւութեան մի տեղ է այն մարդկանց հոգիների համար, որոնք թէպէտև Աստծու շնորհքի մէջ են վախճանուել, բայց Աստուածային Արդարութեան դեռ լիուլի հատուցումն չ'են արել։

Հ. Մենք կարող ենք թեթևացնել քաւարանի հոգիների կրած տանջանքները։

Պ. Այո, մենք կարող ենք թեթևացնել քաւարանի հոգիների կրած տանջանքները նրանց համար աղօթելով, ներողութիւն վաստակելով, ողորմութիւն տալով, և ուրիշ բարեգործութիւններ անելով. բայց ամենից աւելի պատարագ անել տալով։

Հ. Արդեօք մեր մարմինն այլ ևս յարութիւն չի առնել։

Պ. Մեր մարմինն՝ ընդհանրական դատաստանի օրը, յարութիւն պիտի առնէ. յետոյ ամեն մարդ՝ իւր բարի կամ չար գործերի համեմատ, հոգւով ու մարմնով արքայութիւն կամ դժոխք պիտի երթայ։

Հ. Ստոյգ է թէ դժոխք կայ։

Պ. Այո, ստոյգ է. որովհետև Հաւատքն է սովորեցնում մեզ այս ճշմարտութիւնը։

Հ. Չարերը որչա՞փ ժամանակ դժոխքում պիտի մնան։

Պ. Չարերը դժոխքում պիտի մնան մինչև ց'յաւիտեան։

Հ. Մի մահուչափ մեղքով էլ մէկն արժանի է լինում դժոխքին։

Պ. Այո, մի մահուչափ մեղքով էլ մէկն արժանի է լինում դժոխքին։

Հ. Բարիներն որչափ ժամանակ պիտի

մրնան արքայութեան մէջ։

Պ. Բարիները ց՛միշտ պիտի մնան արքայութեան մէջ։

Հ. Ամենն մարդիկ էլ արքայութեան համար են ստեղծուել։

Պ. Այո, ամեն մարդիկ էլ արքայութեան համար են ստեղծուել։

Հ. Ապա ինչու համար ամենքն էլ արքայութիւն չեն գնում։

Պ. Նրա համար ամենքն էլ արքայութիւն չեն գնում՝ որովհետև ամենքն էլ չեն անում ինչ որ պարտաւոր են անելու իրանց փրկութեան համար։

Հ. Ինչ պէտք է անել փրկուելու համար։

Պ. Փրկուելու համար պէտք է հաւատալ Յիսուս Քրիստոսին, և ապրել Աստծու և Եկեղեցու պատուիրանների համաձայն։



Գլուխ Ե.

ՍՈՒՐԲ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՈՒ. -- ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՈՒ ՍՐԲԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ։

Հ. Ի՞նչ է սուրբ Կաթուղիկէ Եկեղեցին։

Պ. Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցին՝ այն ամեն մարդկանց ժողովն է՝ որոնք մկրտուած են՝ հաւատում ու դաւանում են մեր Տէր Քրիստոսի հաւատքը՝, միևնոյն խորհրդներին մասնակցում՝ և երկրիս վրայ իբրև Քրիստոսի փոխանորդ՝ են ճանաչում Հռովմէական Օծյալ-գոյն Քահանայապետին։

Հ. Ո՞վ է հաստատել Եկեղեցին։

Պ. Մեր Տէր Յիսուս Քրիստոսն է հաստատել Եկեղեցին։

Հ. Ի՞նչու համար Յիսուս Քրիստոս հաստատեց Եկեղեցին։

Պ. Նրա համար է Յիսուս Քրիստոս հաստատել Եկեղեցին՝ որպէս զի ամեն մարդիկ կարենան Նրա մէջ գտնել միշտ իրանց փրկութեան համար հարկաւոր եղած միջոցները

Հ. Որոնք են այն պէտքաւոր միջոցները

որ գտնուում են Եկեղեցու մէջ, յաւիտենական կեանքը ձեռք բերելու համար:

Պ. Այն գլխաւոր միջոցներն՝ որ գտնուում են Եկեղեցու մէջ, յաւիտենական կեանքը ձեռք բերելու համար, են՝ ճշմարիտ հաւատքը. խորհրդների միջոցով շնորհքը, մեղքերի թողութիւնն ու Սրբերի հաղորդութիւնը:

Հ. Ինչ է նշանակում մեղքերի թողութիւնը:

Պ. Մեղքերի թողութիւնը նշանակում է թէ Յիսուս Քրիստոս իշխանութիւն է տուել իւր Եկեղեցուն որևէ մեղք արձակելու այն խորհրդների միջոցով, որ հաստատել է այս վախճանիս համար:

Հ. Ինչ է Սրբերի հաղորդութիւնը:

Պ. Սրբերի հաղորդութիւնը՝ ամեն քրիստոնեայ հաւատացեալների՝ Եկեղեցու մէջ կատարուած աղօթքներին և ուրիշ բարեգործութիւններին մասնակից լինելն է:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Միակ Գլուխ

ԱՂՕԹՔԻ ՎՐԱՅ

Հ. Աղօթքն ինչ է:

Պ. Աղօթքը՝ մեր միտքն ու սիրտն առ Աստուած ամբառնալն է, Նրան երկրպագութիւն ու շնորհակալութիւն անելու, և Նրանից մեզի հարկաւոր եղածը խնդրելու համար:

Հ. Աղօթքը հարկաւոր է:

Պ. Այո, աղօթքը հարկաւոր է, և նա էլ յաճախ. որովհետև Աստուած է հրամայում այդ. ու պահանջում է նաև մեր ժամանակաւոր ու յաւիտենական բարիքը:

Հ. Քանի տեսակ աղօթք կայ:

Պ. Երկու տեսակ աղօթք կայ՝ մտաւոր ու ձայնաւոր:

Հ. Ո՞րն է մտաւոր աղօթքը:

Պ. Մտաւոր աղօթքն այն է, որ միայն մտքով է կատարւում, և կոչւում է նաև մտածական։

Հ. Ո՞րն է ձայնաւոր աղօթքը։

Պ. Ձայնաւոր աղօթքն այն է՝ որ կատարւում է խօսքերով, հանդերձ մտադրութեամբ, սրտի ջերմեռանդութեամբ։ Այս աղօթքը կոչւում է մաղթանք։

Հ. Որո՞նք են լաւ աղօթելու միջոցները։

Պ. Լաւ աղօթելու միջոցներն են՝ 1. մտածել թէ Աստծու ներկայութեան առջևն ենք, և թէ իւր ողորմութեանն ու օգնութեանն ենք կարօտ. 2. արտաքուստ՝ այն դիրքն ունենալ, որը վայելում է Աստծու անհուն մեծվայելչութեանը դիմողին։

Հ. Մենք կարո՞ղ ենք յուսալ թէ մեր խընդրած շնորհքները կընդունենք։

Պ. Մենք ոչ միայն կարող ենք՝ այլ և պարտաւոր ենք յուսալու թէ մեր խնդրած շընորհքները կընդունենք. միայն թէ վընասակար չլինեն մեր հոգու փրկութեանը։

Հ. Ինչո՞ւ պարտաւոր ենք յուսալու թէ Աստուած կը լսէ մեր աղօթքը։

Պ. Մենք պարտաւոր ենք յուսալու թէ Աստուած կլսէ մեր աղօթքը, որովհետև

ինքն է խոստացել այդ, և թէ ինքն՝ ամենակարող, ողորմած և հաւատարիմ է իւր խոստումների մէջ։

Հ. Ի՞նչ բանի վրայ պէտք է հիմնուի մեր յոյսը։

Պ. Մեր յոյսը պէտք է որ հիմնուի Յիսուս Քրիստոսի անսահման արդիւնքների վրայ, որի միջոցով արժէք են ունենում մեր բարեգործութիւնները։ Հէնց դրա համար պէտք է, որ միշտ Նրա անուամբը Աստծուն ուղղենք մեր աղօթքները։

Հ. Ո՞րն է ամենագերագանց ձայնաւոր աղօթքը։

Պ. Ամենագերագանց ձայնաւոր աղօթքը Հայր Մերն է, որը Յիսուս Քրիստոս ինքն է սովորեցրել մեզ։

Հ. Ի՞նչ է պարունակում Հայր Մերը։

Պ. Հայր Մերը պարունակում է, ամեն ինչ որ պարտաւոր ենք Աստծուց յուսալու և Նրանից խնդրելու։

Հ. Քանի՞ խնդիր է պարունակում Հայր Մերը։

Պ. Եօթը խնդիր պարունակում է Հայր Մերը. չորս առաջիններով խնդրում ենք բարին, իսկ երեք վերջիններով խնդրում ենք որ Աստուած ազատէ մեզ չարից։

Հ. Առաջին չորս խնդիրներով ինչ բան ենք խնդրում Աստծուց։

Պ. Առաջին չորս խնդիրներով խնդրում ենք որ Աստծու անունը Սուրբ լինի, այսինքն որ բովանդակ աշխարհը Նրան ճանաչէ ու պատուէ։ Նրա արքայութիւնը գայ, հասնի, իւր Եկեղեցու տարածմամբն ու պայծառութեամբը. իւր ամենասուրբ կամքն կատարուի, միշտ և ամենից. վերջապէս տայ մեզի՝ մեր հոգևոր ու ժամանակաւոր սնունդը։

Հ. Որոնք են այն չարիքները, որոնցից խնդրումենք, որ Աստուած ազատէ մեզ։

Պ. Այն չարիքներն՝ որոնցից խնդրում ենք որ Աստուած **ազատէ** մեզ՝ են մեղքերը, փորձութիւնները, և ուրիշ որևէ վիշտ ու թշուառութիւն որ կարող են մեր հոգու փրկութեանը վնասել։

Հ. Հայր մեր-ից յետոյ ուրիշ որ աղօթքն ասելու սովոր ենք։

Պ. Հայր մեր-ից յետոյ սովոր ենք ասելու Ողջոյն քեզ Մարիամ-ը որի միջոցով դիմում ենք ամենասուրբ Կուսին։

Հ. Ինչո՞ւ Հայր մեր-ից յետոյ Ողջոյն Քեզ Մարիամն ենք ասում, քան թէ որևէ մի ուրիշ աղօթք։

Պ. Նրա համար Հայր Մեր-ից յետոյ Ողջոյն Քեզ Մարիամն ենք ասում, որովհետև ամենասուրբը Կոյսն՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոսի մօտ՝ մեր զօրագոյն բարեխօսն է։

Հ. Լաւ և օգտակա՞ր բան է՝ Սրբերի բարեխօսութեանը դիմելը։

Պ. Շատ օգտակար բան է Սրբերի բարեխօսութեանը դիմելը. որովհետև Նրանց աղօթքները շատ հաճելի են Աստծուն։

Հ. Կարող ես ցոյց տալ ինձ աղօթքի մի բարեպաշտ կրթութիւն։

Պ. Աղօթքի մի բարեպաշտ կրթութիւն՝ սուրբ Վարդարանն է. որովհետև իւր մէջ պարունակում է Հայր Մեր-ը, Ողջոյն Քեզ Մարիամն ու մեր սուրբ հաւատքի ամենակարևոր խորհրդների մտածմունքը։

Հ. Քանի՞ են Վարդարանի խորհուրդները։

Պ. Վարդարանի խորհուրդները տասն և հինգ են. հինգն՝ ուրախութեան, հինգը՝ տրտմութեան, և հինգն էլ՝ փառաց։

Հ. Որոնք են ուրախութեան խորհուրդները։

Պ. Ուրախութեան խորհուրդներն են՝

1. Հրեշտակի աւետումը,

2. Ամենասուրբ Կոյս Մարիամի՝ Եղիսաբեթին արած այցելութիւնը.

3, Յիսուս Քրիստոսի ծնունդը.

4- Յիսուս Քրիստոսի՝ տաճարի մէջ ընծայելը,

5. Յիսուս Քրիստոսի՝ տաճարումը վարդապետների մէջ տեղը գտնելը։

Հ. Որոնք են տրամութեան խորհուրդները։

Պ. Տրամութեան խորհուրդներն են՝

1. Յիսուս Քրիստոսի աղօթքը Գեթսեմանի պարտէզի մէջ։

2. Յիսուս Քրիստոսի ձաղկելը.

3. Փշերով պսակելը.

4. Գողգոթայի ճանապարհորդութիւնը

5. Քրկչի խաչելութիւնն ու մահը։

Հ. Որոնք են փառաց խորհուրդները։

Պ. Փառաց խորհուրդներն են՝

1. Մեր Տիրոջ յարութիւնը.

2. Երկինք համբառնալը.

3. Սուրբ Հոգու գալուստը.

4. Տիրամօր վերափոխումը.

5. Ամենասուրբ Կոյս Մարիամ Աստուածածնի պսակելը և ամեն Սրբերի փառքը

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՍՏԾՈՒ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԻՐԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԵՂՔԸ։

Գլուխ Ա.

ԱՍՏԾՈՒ ՊԱՏԻՐԱՆՆԵՐԸ։

ԱՍՏԾՈՒ ՊԱՏԻՐԱՆՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՐՊՈՎ ՆԿԱՏՒԱԾ

Հ. Քանի՞ են Աստուածային Օրէնքի պատուիրանները։

Պ. Աստուածային Օրէնքի պատուիրանները տասն են՝

Ես եմ Տէր Աստուած Քո,

1. Մի ունիցիս զայլ Աստուած առաջի իմ։

2. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն։

3. Յիշեա՛ զօր շաբաթուն սրբել զնա, այսինքն զկիւրակէս։

4. Պատուեա՛ զհայր քո և զմայր։

5. Մի՛ սպանաներ։

6. Մի՛ շնար։

7. Մի գողանար։
8. Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ։
9. Մի ցանկար կնոջ ընկերի քո։
10. Մի ցանկար ամենայնի որ նորա է։

Հ. Ո՞վ է տուել այս պատուիրանները։

Պ. Աստուած Ինքն է տուել այս պատուիրանները հին օրէնքում՝ Մովսէսի միջոցով. և Յիսուս Քրիստոս նրանց հաստատել է նոր օրէնքում։

Հ. Մենք կարող ենք այս պատուիրանները պահել։

Պ. Այո, մենք կարող ենք այս պատուիրանները պահել Աստծու օգնականութեամբը, Որը միշտ պատրաստ է իւր շնորհքը տալու նրան՝ որ պարտուպատշաճ կերպով է խնդրում։

Հ. Պարտաւոր ենք Աստծու պատուիրանները պահելու։

Պ. Այո, պարտաւոր ենք Աստծու պատուիրանները պահելու. և բաւական է մի-այն մէկի դէմ ծանրապէս մեղանչել դժոխքին արժանանալու համար։

Հ. Ի՞նչ են պարունակում այս պատուիրանները։

Պ. Այս պատուիրանները պարունակում

են մեր՝ առ Աստուած և առ ընկերն ունեցած պարտքերը։

Հ. Ի՞նչ պարտականութիւններ ունինք առ Աստուած և առ ընկերն։

Պ. Մեր՝ առ Աստուած ունեցած պարտքն է՝ բոլոր սրտով Նրան ամեն բանից վեր սիրելը. իսկ դէպի ընկերն մեր ունեցած պարտքը, նրան էլ՝ Աստծու սիրոյն համար, մեր անձին պէս սիրելն է։

Հ. Աստուած՝ Իւր պատուիրաններով ընդհանուր կերպով, առ ինչ է պարտաւորեցնում մեզ։

Պ. Աստուած՝ Իւր պատուիրաններով ընդհանուր կերպով պարտաւորեցնում է մեզ գործել բարին ու փախչել չարից. դրա համար իւրաքանչիւր պատուիրանը մի հրաման է պարունակում ու մի արգելք։

ԱՍՏԾՈՒ ՊԱՏԻՒՐԱՆՆԵՐԸ ՄԱՍՆԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ՆԿԱՏԻԱԾ։

Հ. Աստուած ինչ է հրամայում մեզ առաջին պատուիրանի «մի ունիցիս զայլ Աստուած առաջի իմ» խօսքերովը։

Պ. Աստուած՝ առաջին պատուիրանի «մի ունիցիս զայլ Աստուած առաջի իմ»

խօսքերովը հրամայում է մեզ միայն Իրան ճանաչել. երկրպագել, ծառայել իբրև մեր գերագոյն Տիրոջը:

Հ. Ի՞նչ է արգելում մեզ առաջին պատուիրանը:

Պ. Առաջին պատուիրանն արգելում է մեզ՝ կռապաշտութիւնը, աւելորդապաշտութիւնը, սրբապղծութիւնը, հաւատքի ճշմարտութիւնների յանցաւոր տգիտութիւնն ու կրօնի դէմ ուրիշ որևէ մեղքը:

Հ. Բայց կարող ենք պատուել Հրեշտակներին ու Սրբերին:

Պ. Այո՛, կարող ենք պատուել Հրեշտակներին ու Սրբերին, մանաւանդ թէ պարտաւոր ենք այդ բանն անելու. վասն զի Աստծու բարեկամներն են ու Նրա մօտ մեր բարեխօսներն են:

Հ. Պարտաւոր ենք նաև Յիսուս Քրիստոսի ու Սրբերի պատկերներին պատիւ անելու:

Պ. Այո՛, անտարակոյս, պարտաւոր ենք նաև Յիսուս Քրիստոսի ու Սրբերի պատկերներին պատիւ անելու, որովհետև այս պատկերներին տրուած պատիւը հէնց Յիսուս Քրիստոսին ու Սրբերին է գնում:

Հ. Իսկ ինչու համար ենք յարգում

Սրբերի նշխարքները:

Պ. Նրա համար ենք յարգում Սրբերի նշխարքները, որովհետև նրանց մարմինները Յիսուս Քրիստոսի կենդանի անդամներն և Սուրբ Հոգու տաճարներն եղան ու փառաւոր յարութիւն պիտի առնեն յաւիտենական կեանքը ժառանգելու համար:

Հ. Ի՞նչ է արգելում մեզ երկրորդ պատուիրանը «Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն:»

Պ. Երկրորդ պատուիրանը՝ «մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն», արգելում է մեզ՝ 1. — Աստծու անունը առանց յարգութեան յիշելը. 2. — Սուտ, կամ անհարկաւոր, և կամ էլ որևէ մի կերպով ապօրինաւոր երդումներ անելը. և 3. — Աստծու, ամենասորը Կուսի ու Սրբերի դէմ հայհոյելը:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ երկրորդ պատուիրանը:

Պ. Երկրորդ պատուիրանը հրամայում է մեզ Աստծու սրբազան անունը պատուել և արած ուխտերը և երդումները կատարել:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ երրորդ պատուիրանը՝ «Յիշեա զօր շաբաթուն սրբել

զնա, այսինքն զկիւրակէս։»

Պ. Երրորդ պատուիրանը՝ «Յիշեա զօր շաբաթուն սրբել զնա, այսինքն զկիւրակէս,» հրամայում է մեզ քրիստոնէական բարեպաշտութեան գործերով Աստծուն պատուել այն տօն օրերում, որ նուիրուել են Իրան պաշտօնին համար։

Հ. Ի՞նչ է արգելում մեզ երրորդ պատուիրանը։

Պ. Երրորդ պատուիրանն արգելում է մեզ տօն օրերը ծառայական գործեր կատարելը։

Հ. Ո՞ր գործերն են ծառայական կոչւում։

Պ. Ծառայական գործեր կոչւում են այն մարմնաւոր աշխատութիւնները, որ յատուկ են ծառաներին, արհեստաւորներին ու գործաւորներին։

Հ. Չկա՞յ մի ծառայական գործ, որ տօն օրերն էլ թոյլ տրուած լինի։

Պ. Թոյլ տրուած են այն գործերն որ անհրաժեշտ են կեանքին կամ Աստծու ծառայութեանը, և նրանք՝ որ մի ծանր պատճառի համար են՝ ի գործ տրրւում, հրաման խնդրելով իւր սեփհական հոգեվորդապետից՝ եթէ կարելի է։

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ չորրորդ

պատուիրանը՝ «Պատուեա զհայր քո եւ զմայր։»

Պ. Չորրորդ պատուիրանը՝ «Պատուեա զհայր քո եւ զմայր» հրամայում է մեզ յարգել մեր հօրն ու մօրը, հնազանդել նրանց այն ամեն բանի մէջ, որ մեղք չէ, և օգնել նրանց՝ իրանց հոգևոր ու ժամանակաւոր կարօտութիւնների մէջ։

Հ. Ի՞նչ է արգելում մեզ չորրորդ պատուիրանը։

Պ. Չորրորդ պատուիրանն արգելում է մեզ հոսքերով, գործերով և ուրիշ որ և իցէ կերպով մեր ծնողներին վշտացնելը։

Հ. Հօրն ու մօր անուան ներքոյ, ուրիշ որ անձերին էլ նկատի է առնում այս պատուիրանը։

Պ. Այս պատուիրանը Հօրն ու մօր անուան ներքոյ նկատի է առնում նաև ամեն թէ՝ եկեղեցական և թէ՝ աշխարհական մեծաւորներին՝ որոնց պարտաւոր ենք հնազանդելու և յարգելու։

Հ. Ի՞նչ է արգելում մեզ հինգերորդ պատուիրանը՝ «Մի սպանաներ»։

Պ. Հինգերորդ պատուիրանը՝ «Մի սպանաներ» արգելում է մեզ սպանել, ծեծել կամ վիրաւորել և կամ որ և է մի վնաս հասցնել

ընկերոջ մարմնին՝ թէ՝ անձամբ լինի և թէ ուրիշի ձեռքով. որպէս նաև նախատական խօսքերով նրան վշտացնել, նրա չարիքը բաղձալ ու նրան գայթակղութիւն տալ. Այս պատուիրանով Աստուած արգելում է նաև ինքն իրան սպանելն այսինքն՝ անձնասպանութիւնը:

Հ. Ինչու համար է Աստուած հինգերորդ պատուիրանով արգելում ինքն իրան սպանելն այսինքն՝ անձնասպանութիւնը:

Պ. Նրա համար է Աստուած հինգերորդ պատուիրանով արգելում անձնասպանութիւնը. որովհետև մարդ ոչ իւր կեանքի տէրն է և ոչ էլ ուրիշների. եկեղեցին էլ պատժում է անձնասպանութիւնը եկեղեցական թաղումը ժխտելով:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ հինգերորդ պատուիրանը:

Պ. Հինգերորդ պատուիրանը հրամայում է մեզ ներել մեր թշնամիներին և ամենի բարիքը կամենալ:

Հ. Ի՞նչ է արգելում մեզ վեցերորդ պատուիրանը «մի շնար:»

Պ. Վեցերորդ պատուիրանը «մի շնար,» արգելում է մեզ որևիցէ գործ, որևիցէ հայեացք

ու որևիցէ խօսք որ ողջախոհութեան դէմ է:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ վեցերորդ պատուիրանը:

Պ. Վեցերորդ պատուիրանը հրամայում է մեզ ողջախոհ ու համեստ լինել մեր գործերի, հայեացքի, շարժման ու խօսքերի մէջ:

Հ. Ի՞նչ է արգելում մեզ եօթներորդ պատուիրանը՝ «մի գողանար»:

Պ. Եօթներորդ պատուիրանը՝ «մի գողանար,» արգելում է մեզ ուրիշի ինչքը անիրաւաբար առնելն ու պահելը, և որևէ կերպով՝ օրինակի համար վաշխով, խաբէութեամբ ու սրա նման նենգութիւններով ընկերոջ վնաս հասցնելը:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ եօթներորդ պատուիրանը:

Պ. Եօթներորդ պատուիրանը՝ հրամայում է մեզ ուրիշի ինչքը յետ դարձնել, անիրաւութեամբ հասցրած վնասները փոխարինել, ու պարտքերը հատուցանել:

Հ. Ի՞նչ է արգելում մեզ ութերորդ պատուիրանը՝ «մի սուտ վկայեր զընկերէ քումմէ:»

Պ. Ութերորդ պատուիրանը՝ «մի սուտ վկայեր զընկերէ քումմէ՝» արգելում է մեզ

դատաստանի մէջ սուտ վկայելը արգելում է նաև զրպարտութիւնը, բանբասանքը, շողոքորթութիւնը, յանդուգն դատողութիւնը ու կասկածը, և ամէն տեսակ ստախօսութիւնը:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ ութերորդ պատուիրանը:

Պ. Ութերորդ պատուիրանը հրամայում է մեզ ժամանակին ու տեղին ճշմարտութիւնն ասել և մեր ընկերոջ գործերին՝ կարելի եղածին չափ, բարի մեկնութիւն տալ:

Հ. Ի՞նչ է արգելում մեզ իններորդ պատուիրանը՝ «մի ցանկար կնոջ ընկերի քո:»

Պ. Իններորդ պատուիրանը՝ «մի ցանկար կնոջ ընկերի քո,» արգելում է մեզ չար բաղձանքները և մաքրութեան դէմ ամեն ներքին մեղքերը:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ իններորդ պատուիրանը:

Պ. Իններորդ պատուիրանը հրամայում է մեզ՝ ներքուստ էլ ողջախոհ ու մաքուր լինել:

Հ. Ի՞նչ է արգելում մեզ տասներորդ պատուիրանը՝ «մի ցանկար ամենայնի՝ որ նորա է:»

Պ. Տասներորդ պատուիրանը՝ «մի ցանկար

ամենայնի՝ որ նորա է», արգելում է մեզ ուրիշին իւր ընչիցը զրկելու բաղձանքը, և անիրաւ միջոցներով հարստութիւն ձեռք բերելու փափագը:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ տասներորդ պատուիրանը:

Պ. Տասներորդ պատուիրանը հրամայում է մեզ գոհ լինել այն վիճակից, որի մէջ Աստուած դրել է մեզ, ու համբերութեամբ տանել աղքատութեանը, երբ Աստուած կամենայ, որ այն վիճակի մէջ գտնուինք:

Բ. Գլուխ

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԻՐԱՆՆԵՐԸ

Հ. Քանի՞ են Եկեղեցու գլխաւոր պատուիրանները:

Պ. Եկեղեցու գլխաւոր ու սովորական պատուիրանները հինգ են՝

1. Յաւուրս կիւրակէից և հրամայեալ տօնից տեսանել զպատարագ:

2. Պահել զքառասնորդական և զայլ պահս և զծոմապահս հրամայեալս և հրաժարիլ 'ի մսոյ յաւուրս արգելեալս:

3. 'Ի տարւոջ գոնէ մի անգամ խոստովանիլ և հաղորդիլ 'ի Զատկի յարութեան Տեառն 'ի ժողովրդապետական եկեղեցւոջ:

4. Տալ զտասանորդս Եկեղեցւոյ՝ ըստ սովորութեան:

5. Մի առնել հարսանիս յարգելեալ ժամանակս, այսինքն՝ 'ի Ցինականաց բարեկենդանէ մինչև ցվերջ Սաղջաւորաց, 'ի բուն բարեկենդանէ մինչև ցվերջ ութօրէից Հոգեգալստեան և յաւուրս շաբաթապահոց:

Հ. Եկեղեցին ունի՞ է իշխանութիւն

ստացել մեզ պատուիրաններ տալու:

Պ. Եկեղեցին նոյն իսկ Յիսուս Քրիստոսից է իշխանութիւն ստացել մեզ պատուիրաններ տալու և դրա համար ով որ անհնազանդում է Եկեղեցուն, հէնց Աստծուն է անհնազանդում:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ Եկեղեցու առաջին պատուիրանը՝ «Յաւուրս Կիւրակէից և հրամայեալ տօնից տեսանել զպատարագ:»

Պ. Եկեղեցու առաջին պատուիրանը՝ «Յաւուրս կիւրակէից եւ հրամայեալ տօնից տեսանել զպատարագ,» հրամայում է մեզ՝ ամեն կիրակի և այլ հրամայված տօն օրերը, ջերմեռանդութեամբ սուրբ պատարագին ներկայ գտնուելու:

Հ. Այս խօսքերով՝ «պահել զպահս և զծոմապահս հրամայեալս». ի՞նչ է հրամայում մեզ Եկեղեցու երկրորդ պատուիրանը:

Պ. Այս խօսքերով՝ «պահել զպահս և զծոմապահս հրամայեալս», Եկեղեցու երկրորդ պատուիրանը հրամայում է մեզ, որ մեծ պահքը և շաբաթական պահքերը պահենք:

Հ. Ո՞վ է պարտաւորված ծոմ պահելու:

Պ. Ծոմ պահելու պարտաւորված են այն ամեն քրիստոնեաներն՝ որ լրացրել

են իրանց քսան և մէկերորդ տարին և թէ՝ ծոմ չը պահելու համար ոչ տնօրինում ունին, և ոչ էլ մի օրինաւոր արգելք:

Հ. Ի՞նչ է արգելում մեզ Եկեղեցու երկրորդ պատուիրանը «Հրաժարիլ ի մսոյ յաւուրս արգելեալս» խօսքերովը:

Պ. Եկեղեցու երկրորդ պատուիրանը՝ «հրաժարիլ 'ի մսոյ յաւուրս արգելեալս», խօսքերովն արգելում է մեզ միս ուտել այն չորեքշաբթի, ուրբաթ և ուրիշ պահքի օրերը, որ չեն «տնօրինուած»:

Հ. Ինչու համար է Եկեղեցին հաստատել ծոմի և պահքի օրէնքը:

Պ. Նրա համար է Եկեղեցին ծոմի և պահքի օրէնքը հաստատել, որ մեզ օգնէ մեղքերի վրայ ապաշխարելու, մեր կրքերին յաղթահարելու և Աստծուց շնորհքներ ընդունելու:

Հ. Ի՞նչ է հրամայում Եկեղեցին երրորդ պատուիրանի խօսքերովն՝ «'ի տարւոջ գոնէ մի անգամ խոստովանիլ:»

Պ. Եկեղեցին՝ երրորդ պատուիրանի խօսքերովն «'ի տարւոջ գոնէ մի անգամ խոստովանիլ», պարտաւորեցնում է

բանաւորութիւնը բացւած ամեն քրիստոնեաներին որ ամեն տարի գոնէ մի անգամ ապաշխարութեան խորհրդին մերձենան

Հ. Եկեղեցին ինչու է ասում, որ խոստովանուենք «գոնէ» տարին մի անգամ:

Պ. Եկեղեցին ասում է «գոնէ», մեզ յայտնելու համար, թէ իւր բաղձանքն այն է՝ որ աւելի ստէպ սուրբ խորհուրդներին մերձենանք:

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ Եկեղեցին երրորդ պատուիրանի միւս խօսքերովը՝ «հաղորդիլ ի Զատկի յարութեան Տեառն իւրաքանչիւր ոք յիւր ժողովրդապետական եկեղեցւոջ»:

Պ. Երրորդ պատուիրանի միւս խօսքերովը՝ «հաղորդիլ 'ի Զատկի յարութեան Տեառն, իւրաքանչիւր ոք յիւր ժողովրդապետական եկեղեցւոջ», Եկեղեցին պարտաւորեցնում է ամեն չափահաս քրիստոնեաներին, որ ամեն տարի, իրանց ծխական եկեղեցու մէջ, զատկական օրերում, ամենասուրբ Հաղորդութիւնն ընդունեն:

Հ. Ի՞նչպէս է պահւում չորրորդ պատուիրանը «տալ զտասանորդս պարտեալն Եկեղեցւոյ՝»:

Պ. Չորրորդ պատուիրանը՝ «տալ զտասանորդս պարտեալն Եկեղեցւոյ՝» պահւում

է այն ամեն նուէրներն ու տուրքերը տալով, որոնք սահմանուել են Աստծու՝ ամեն բաների վրայ ,գերագոյն Տէրութիւնն ճանաչելու և Իւր պաշտօնեաների վայելուչ ապրուստը հոգալու համար:

Հ. Ի՞նչ է արգելում մեզ Եկեղեցին հինգերորդ պատուիրանով՝ «մի առնել հարսանս յաւուրս արգելեալս:»

Պ. Եկեղեցին հինգերորդ պատուիրանով՝ «մի առնել հարսանիս յաւուրս արգելեալս,» արգելում է մեզ՝ Յիսնակաց բարեկենդանից մինչև Առաջաւորաց բարեկենդանի վերջը, բուն բարեկենդանից մինչև Հոգեգալստեան ուխտօրէի վերջն ու բոլոր շաբաթական պահքերի ընթացքում հանդիսաւոր հարսանիք անելը:

Գ. Գլուխ

ՄԵՂՔԸ

Հ. Մեղքն ինչ է:

Պ. Մեղքն՝ Աստծու օրէնքի կամաւոր զանցումն է:

Հ. Քանի՞ տեսակ մեղք կայ:

Պ. Երկու տեսակ մեղք կայ՝ սկզբնական ու ներգործական:

Հ. Ո՞րն է սկզբնական մեղքը:

Պ. Սկզբնական մեղքն այն է, որով ծընուում ենք ամենքս էլ, և որը ժառանգում ենք մեր նախահայր Ադամից:

Հ. Կայի՞ն այնպիսի արարածներ որ սկզբնական մեղքից ազատ լինէին:

Պ. Միայն ամենասուրբ կոյս Մարիամն էր որ Իւր Աստուածային Որդու՝ Յիսուս Քրիստոսի արդիւնքների համար, մասնաւոր առանձնաշնորհութեամբ սկզբնական մեղքից ազատ մնաց. դրա համար Նա «Անարատ» է կոչուում:

Հ. Ո՞րն է ներգործական մեղքը:

Պ. Ներգործական մեղքն այն է, որ

մենք ենք գործում մեր բանաւորութիւնը բացւելուց յետոյ:

Հ. Քանի՞ տեսակ է ներգործական մեղքը:

Պ. Երկու տեսակ է ներգործական մեղքը. Մահուշափ ու Ներելի:

Հ. Ո՞րն է Մահուշափ մեղքը:

Պ. Մահուշափ մեղքը՝ ծանր նիւթի մէջ՝ լիուլի մտադրութեամբ ու կատարեալ հաւանութեամբ, Աստծու օրէնքին անհնազանդիլն է:

Հ. Ինչո՞ւ համար այս մեղքը «մահուշափ» է կոչւում:

Պ. Նրա համար ծանր մեղքը «մահուշափ» է կոչւում, որովհետև մեռցնում է հոգին, այսինքն՝ նրան զրկում է Աստծու շնորհքից, որ իւր գերբնական կեանքն է, ու իրան գործողին արժանացնում է դժոխքին:

Հ. Մահուշափ մեղքն ուրիշ ինչ չարիք է պատճառում մեր հոգուն:

Պ. Մահուշափ մեղքը կորցնել է տալիս առաջուց շահած արդիւնքներն, այսինքն կախակայում է նրանց արժէքը. և մարդուն անկարող է դարձնում յաւիտենական կեանքի համար արդիւնաւոր գործեր

կատարելու և նրան աւելի հակեցնում է դէպի չարը:

Հ. Ով որ մահուշափ մեղքով կորցրել է Աստծու շնորհքը՝ չի՞ կարող այլևս նրան ձեռք բերել:

Պ. Ով որ մահուշափ մեղքով կորցրել է Աստծու շնորհքը՝ կարող է դարձեալ նրան ձեռք բերել Ապաշխարութեան խորհրդի միջոցով և կամ կատարեալ զղջմամբ, որը գոնէ լռելեայն միացած լինի՝, կարելի եղածին չափ, շուտ խոստովանելու՝ առաջադրութեան հետ:

Հ. Ներելի մեղքը ո՞րն է:

Պ. Ներելի մեղքն այն է, որ չի զրկում մեզ Աստծու շնորհքից, այլ տկարացնում է մեզանում Սիրոյ եռանդը, և տրամադրում է մեզ դէպի մահուշափ սեղքն և թէ այս և թէ միւս աշխարհում ժամանակաւոր պատիժներին արժանացնում է:

Հ. Ինչո՞ւ այս մեղքը «ներելի» է կոչւում:

Պ. Այս մեղքը «ներելի» է կոչւում, որովհետև թեթև յանցանք լինելով՝ աւելի դիւրութեամբ է Աստծուց ներումն ընդունում:

Հ. Քանի՞ կերպով կարելի է մեղք գործել:

Պ. Չորս կերպով կարելի է մեղք գործել,

այսինքն՝ խորհրդով, խօսքով, գործով ու զանցաւորութեամբ:

Հ. Ի՞նչպէս է մեղք գործւում խորհրդով, խօսքով ու գործով:

Պ. Մեղք է գործւում խորհրդով, խօսքով ու գործով, երբ մէկը կամքի կատարեալ հաւանութեամբ, հաճոյքով, արգելւած բաների վրայ է մտածում, որոշողութեամբ նրանց փափագում, նրանց վրայ խօսում և կամ այդ արգելւած բաները գործում:

Հ. Ի՞նչպէս է մեղք գործւում զանցաւորութեամբ:

Պ. Մեղք է գործւում զանցաւորութեամբ՝ երբ մէկը կամովին զանց է առնում հրամայւած բաները:

Հ. Քանի՞ են գլխաւոր ախտերը:

Պ. Գլխաւոր ախտերը եօթն են՝ 1—Հպարտութիւն, 2— Ագահութիւն, 3— Բղջախոհութիւն, 4—Բարկութիւն, 5—Որկրամոլութիւն, 6— Նախանձ ու 7— Ծուլութիւն:

Հ. Ի՞նչու այս ախտերը գլխաւոր են կոչւում:

Պ. Այս ախտերը գլխաւոր են կոչւում, որովհետև միւս ախտերի ու

մեղքերի աղբիւրն են:

Հ. Սուրբ Հոգու դէմ եղած մեղքերը քանի՞ են:

Պ. Սուրբ Հոգու դէմ եղած մեղքերը վեց են՝ 1—փրկութիւնից յոյս կտրելը, 2— առանց արդիւնքի փրկւելու յանդգնութիւնը, 3— ծանուցեալ ճշմարտութեան դէմ կենալ 4—ուրիշի շնորհքի վրայ նախանձիլը, 5—մեղքերի մէջ յամառիլը և 6—վերջնական անզեղջութիւնը:

Հ. Ո՞ր մտածմունքն է որ մեզ աւելի հեռու է պահում մեղքից:

Պ. Այն մտածմունքն որ մեզ աւելի հեռու է պահում մեղքից՝ մեր Վերջինների վրայ մտածելն է, այսինքն այն բաների վրայ, որ պիտի պատահեն մեզ:

Հ. Քանի՞ են Վերջինները:

Պ. Վերջինները չորս են՝ Մահ, Դատաստան, Դժոխք և Արքայութիւն:

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ:

Գլուխ Ա.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՐՊՈՎ ՆԿԱՏԻԱԾ:

Հ. Քանի՞ են խորհուրդները:

Պ. Խորհուրդները եօթն են՝ 1—Մկրտութիւն, 2—Դրոշմ, 3—Հաղորդութիւն, 4—Ապաշխարութիւն. 5—Վերջին օծում, 6—կարգ քահանայութեան ու 7—Պսակ:

Հ. Ի՞նչ է նշանակում «խորհուրդ» բառը:

Պ. «Խորհուրդ» բառը նշանակում է շնորհքի զգալի և ազդու մի նշան, որ Յիսուս Քրիստոսից է հաստատուած մեր հոգիները սրբացնելու համար:

Հ. Ինչու՞ ես խորհուրդները շնորհքի զգալի և ազդու նշաններ կոչում:

Պ. Նրա համար եմ խորհուրդները Աստծու շնորհքի զգալի և ազդու նշաններ կոչում, որովհետև ամեն խորհուրդները՝ զգալի իրերի միջոցով, նշանակում են այն Աստուածային շնորհքն, որ առաջ են բերում մեր հոգու մէջ:

Հ. Ի՞նչպէս են սրբացնում մեզ խորհուրդները:

Պ. Խորհուրդները մեզ՝ սրբացնում են կամ տալով մեզ և կամ էլ աճեցնելով մեզանում շնորհքը, որը մեզ սուրբ և Աստծուն հաճոյ, Նրա որդեգրական որդիներ և արքայութեան ժառանգներ է դարձնում:

Հ. Ո՞վ է խորհուրդներին կարողութիւն տուել մեզ սրբացնելու:

Պ. Յիսուս Քրիստոսն է Իւր չարչարանքներովն ու մահուամբը խորհրդներին կարողութիւն տուել մեզ սրբացնելու:

Հ. Որո՞նք են այն խորհուրդներն, որ մեզ սրբացնում են տալով մեզ շնորհքը, որը Աստծու բարեկամներ է դարձնում մեզ:

Պ. Այն խորհուրդներն որ մեզ սրբացնում են տալով մեզ առաջին շնորհքը՝ և մեզ Աստուծոյ բարեկամներն են դարձնում երբ որ առաջ Նրա թշնամիներն էինք, երկու են՝ «Մկրտութիւնն ու Ապաշխարութիւնը» և կոչւում են «մեռածների խորհուրդներ», որովհետև բառնում են մեղքը, որ հոգու մահն է:

Հ. Ո՞ր խորհուրդներն սրբացնում են մեզ աճեցնելով մեզանում շնորհքը:

Պ. Այն խորհուրդներն որ սրբացնում են մեզ, աճեցնելով մեզանում շնորհքը, հինգն՝ Դրոշմ, Հաղորդութիւն, Վերջին Օծում, Կարգ քահանայութեան ու Պսակ, և կոչւում են «կենդանիների խորհուրդներ», որովհետև ով որ ընդունում է նրանց, պէտք է որ Աստծու շնորհքով կենդանի լինի, այսինքն՝ մահուչափ մեղքից ազատ։

Հ. Ի՞նչ մեղք է գործում, նա որ իմանալով թէ Աստծու շնորհքի մէջ չի գտնւում, և ընդունում է կենդանիների խորհրդներից մէկը։

Պ. Նա՝ որ իմանալով թէ Աստծու շնորհքի մէջ չի գտնւում, և ընդունում է կենդանիների խորհրդներից մէկը, մի մեծ և ծանր սրբապղծութիւն է գործում։

Հ. Որոնք են մեր փրկութեան համար ամենահարկաւոր խորհուրդները։

Պ. Մեր փրկութեան համար ամենահարկաւոր խորհուրդներն երկու են՝ Մկրտութիւնն ու Ապաշխարութիւնը. Մկրտութիւնը հարկաւոր է ամենին, իսկ Ապաշխարութիւնը՝ նրանց, որ ծանրապէս մեղանչել են Մկրտութիւնից յետոյ։

Հ. Ո՞ր խորհուրդներն են որ միայն մի անգամ կարող են՝ ընդունելի։

Պ. Այն խորհուրդներն՝ որ միայն մի անգամ կարող են ընդունելի, երեք են՝ Մկրտութիւն, Դրոշմ ու Կարգ քահանայութեան։

Հ. Ի՞նչու այս երեք խորհուրդները՝ Մկրտութիւնը, Դրոշմն ու Քահանայութեան Կարգը միայն մի անգամ կարող են ընդունելի։

Պ. Այս երեք խորհուրդները՝ Մկրտութիւնը, Դրոշմն ու Քահանայութեան Կարգը միայն մի անգամ կարող են ընդունելի, որովհետև նրանցից իւրաքանչիւրը մի կնիք է դրոշմում։

Հ. Ինչ է այն «կնիքն» որ այս երեք խորհրդներից իւրաքանչիւրը՝ Մկրտութիւնը, Դրոշմն ու քահանայութեան Կարգը դրոշմում է հոգու մէջ։

Պ. Այն կնիքն, որ այս երեք խորհրդներից իւրաքանչիւրը՝ Մկրտութիւնը, Դրոշմն ու Քահանայութեան Կարգը դրոշմում է հոգու մէջ, մի հոգևոր նշան է, որ այլևս չի ջնջվիլ։

Հ. Ի՞նչ բանի է ծառայում այն կնիքն որ այս երեք խորհուրդները Մկրտութիւնը, Դրոշմն ու Քահանայութեան Կարգը տպաւորում են հոգու մէջ։

Պ. Այն կնիքն՝ որ այս երեք խորհուրդները

Մկրտութիւնը, Դրոշմն ու Քահանայութեան Կարգը տպաւորում են հոգու մէջ, ծառայում է 1—Մկրտութեան մէջ՝ մեզ նշանելու իբրև Յիսուս Քրիստոսի անդամները, 2—Դրոշմի մէջ, մեզ նշանելու իբրև Յիսուս Քրիստոսի զինուորները, ու 3— Քահանայութեան Կարգի մէջ՝ իբրև Իւր պաշտօնեաներ:

Հ. Քանի՞ բան պէտք է մի խորհուրդ կատարելու համար:

Պ. Մի խորհուրդ կատարելու համար պէտք է՝ «նիւթ, ձեւ ու պաշտօնեայ» որը, խորհուրդ կատարելով, դիտաւորութիւն ունենայ անելու ինչ որ Եկեղեցին ուզում է անել:

Հ. Ի՞նչ է խորհրդի նիւթը:

Պ. Խորհրդի նիւթն՝ այն զգայի իրն է, որ գործ է ածւում խորհուրդ կատարելիս, զոր օրինակ, Մկրտութեան մէջ՝ բնական ջուրը, Դրոշմի մէջ՝ ձէթն ու բալասամը:

Հ. Ի՞նչ է խորհրդի ձևը:

Պ. Խորհրդի ձևը՝ այն խօսքերն են, որ արտաբերւում են խորհրդ կատարելիս:

Հ. Ո՞վ է խորհրդների պաշտօնեան:

Պ. Խորհրդների պաշտօնեան՝ այն անձն է, որ կատարում կամ մատակարարում է խորհուրդը:

Գլուխ Բ.

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Հ. Մկրտութիւնն ինչ է:

Պ. Մկրտութիւնը մի խորհուրդ է՝ որի միջոցով վերածնւում ենք Աստծու շնորհքի մէջ ու քրիստոնեայ դառնում:

Հ. Որո՞նք են Մկրտութեան խորհրդի արդասիքները:

Պ. Մկրտութեան խորհուրդը ջնջում է սկզբնական մեղքը, նաև ներում ներգործականը՝ եթէ գտնւի, թողնում է նրանց արժանի եղած ամեն պատիժը, դրոշմում է Յիսուս Քրիստոսի անդամների կնիքը, մեզ Աստծու և Եկեղեցու որդիներ և արքայութեան ժառանգներ է դարձնում և ընդունակ անում միւս խորհուրդներն ընդունելու:

Հ. Ո՞վ է Մկրտութեան կարգաւոր պաշտօնեան:

Պ. Մկրտութեան կարգաւոր պաշտօնեան քահանան է և 'ի մասնաւորի նա, որ հոգիների խնամքն ունի:

Հ. Հարկաւորութեան դէպքում ո՞վ կարող է Մկրտութիւնը տալ:

Պ. Հարկաւորութեան դէպքում՝ որևէ մէկը, թէ՝ մարդ լինի թէ՝ կին, հերետիկոսը, անհաւատն անգամ կարող է Մկրտութիւնը տալ։

Հ. Ի՞նչպէս պէտք է մկրտել։

Պ. Ըստ հայաստանեաց Եկեղեցւոյ պէտք է մկրտուողին ջրի մէջ ընկղմել, եթէ այդ անկարելի է, պէտք է նրա գլխին կամ մարմնի ուրիշ գլխաւոր մասի վրայ երեք անգամ ջուր ածել մի և նոյն ժամանակ ասելով «(Այս անուն) ծառայս կամաղախինս Աստուծոյ մկրտի ի ձեռն իմ յանուն Հօր † եւ Որդւոյ † եւ Հոգւոյն Սրբոյ։» †

Հ. Ի՞նչ դիտաւորութիւն պէտք է ունենայ մկրտողը։

Պ. Մկրտողը պէտք է դիտաւորութիւնն ունենայ անելու այն բանն որ սուրբ Եկեղեցին անում է մկրտելիս։

Հ. Երբ են երեխաներին բերելու Եկեղեցի որպէս զի մկրտուին։

Պ. Կարելի եղածին չափ շուտ՝ պէտք է երեխաներին բերել Եկեղեցին որպէս զի մկրտուին։

Հ. Ի՞նչ բանի է պարտաւորւում նա որ Մկրտութիւնն է ընդունում։

Պ. Նա որ Մկրտութիւն է ընդունում պարտաւորւում է ց՝միշտ Յիսուս Քրիստոսի հաւատքը դաւանելու, և Եկեղեցու օրէնքները պահելու։

Հ. Ի՞նչ բանից են հրաժարւում Մկրտութիւնն ընդունելիս։

Պ. Սուրբ Մկրտութիւնն ընդունելիս, ցմիշտ հրաժարւում են սատանայից, նրա գործերից և փառաւորութիւններից։

Հ. Ի՞նչ է հասկացւում սատանայի գործերից ու փառաւորութիւններից։

Պ. Սատանայի գործերից ու փառաւորութիւններից հասկացւում են մեղքերը, ապականեալ սկզբունքները և աշխարհի ունայնութիւնները։

Հ. Պարտաւոր ենք հաստատ հաւատարիմ մնալու այն խոստումներին ու հրաժարմանը որ Կնքահայրերն արել են մեր փոխարէն։

Պ. Այո՛, պարտաւոր ենք որովհետև Աստուած միայն այս պայմանով է մեզ իւր շնորհքի մէջ ընդունել։

Գլուխ Գ.

ԴՐՈՇՄԸ

Հ. Ի՞նչ է Դրոշմի խորհուրդը։

Պ. Դրոշմը՝ մի խորհուրդ է, որ տալիս է մեզ Սուրբ Հոգին, Յիսուս Քրիստոսի զինուորների կնիքն է տպաւորում մեր հոգու մէջ, ու մեզ կատարեալ քրիստոնեաներ դարձնում։

Հ. Դրոշմը մեզ ինչ կերպով է կատարեալ քրիստոնեաներ դարձնում։

Պ. Դրոշմը մեզ կատարեալ քրիստոնեաներ է դարձնում, որովհետև հաստատում է մեզ հաւատքի մէջ ու կատարելագործում Սուրբ Մկրտութեան մէջ մեր ընդունուած միւս առաքինութիւններն ու պարգևները։

Հ. Քանի՞ են Սուրբ Հոգու պարգևներն, որ ընդունւում են Դրոշմի խորհրդի մէջ։

Պ. Եօթն են Սուրբ Հոգու պարգևներն, որ ընդունւում են Դրոշմի խորհրդի մէջ՝ Իմաստութիւն, Հանճար, Խորհուրդ, Զօրութիւն, Գիտութիւն, Աստուածպաշտութիւն և Աստծու Երկիւղը։

Հ. Ամենքն էլ պարտաւոր են փոյթ

ունենալ Դրոշմի խորհուրդն ընդունելու։

Պ. Այո՛, ամենքն էլ պարտաւոր են փոյթ ունենալ Դրոշմի խորհուրդն ընդունելու և իրանց հպատակներին էլ ընդունել տալու։

Հ. Ո՞ր հասակում լաւ է Դրոշմն ընդունել։

Պ. Այն հասակը, որում լաւ է Դրոշմն ընդունել գրեթէ 7 տարեկան հասակն է, որովհետև սովորաբար. այն ժամանակ են սկսում փորձութիւնները, և կարելի է բաւականաչափ հասկանալ այն խորհուրդի շնորհքն և նրան ընդունած լինելը յիշել։

Հ. Ի՞նչ պատրաստութիւններ են պահանջւում Դրոշմի խորհուրդն արժանապէս ընդունելու համար։

Պ. Այս խորհուրդն արժանապէս ընդունելու համար պէտք է շնորհքի մէջ գտնուել մեր սուրբ հաւատքի գլխաւոր խորհուրդները գիտենալ և յարգանքով ու ջերմեռանդութեամբ մերձենալ նրան։

Հ. Ո՞վ է Դրոշմի խորհրդի պաշտօնեան։

Պ. Դրոշմի կարգաւոր պաշտօնեան Եպիսկոպոսն է։

Հ. Ի՞նչ արարողութիւններով է Եպիսկոպոսը մատակարարում այս խորհուրդը։

Պ. Հայ արարողութեան մէջ Դրոշմի

պաշտօնեան այս խորհուրդը մատակարարելիս, աջ ձեռքը դնում է Դրոշմուղի գլխին Սուրբ Հոգուն հրաւիրելով նրա վրայ. վերջը Սուրբ մեռոնով խաչաձև օծում է նախ նրա ճակատը, ասելով «իւղ անոյշ հեղեալ յանուն Յիսուսի Քրիստոսի ի վերայ քո կնիք† աստուածային եւ երկնաւոր պարգեւացն: Յանուն Հօր † եւ Որդւոյ† եւ Հոգւոյն Սրբոյ† ամէն. յետոյ՝ աչքերն, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, կռնակը, ոտքերը, յարելով իւրաքանչիւրին յատուկ ձևը. վերջապէս խաղաղութիւն մաղթելով արձակում է նրան:

Հ. Ինչ է Ս. Մեռոնը:

Պ. Ս. Մեռոնը բալասանի հետ խառնուած ձէթ է, որ Աւագ Հինգշաբթի օրը օրհնում է Եպիսկոպոսը:

Հ. Ձէթն ու բալասանը ի՞նչ են նշանակում այս խորհրդի մէջ:

Պ. Ձէթն՝ որ տարածւում ու զօրացընում է, այս խորհրդի մէջ նշանակում է շնորհքի առատութիւնը, որ սփռւում է Քրիստոնէի Հոգու մէջ նրան հաւատքի մէջ հաստատելու համար. իսկ բալասանը՝ որ անուշահոտ է, և ապականութիւնից

պահում, նշանակում է թէ քրիստոնեան՝ այս շնորհքով զօրացած, ընդունակ է քրիստոնէական առաքինութիւնների անուշահոտութիւնը բուրել և ինքն իրան ախտերի ապականութիւնից պահել:

Հ. Ինչու համար են օծում ճակատը:

Պ. Նրա համար են օծում ճակատը, ուր երևում են ամօթխածութիւնը ու վախի նշաններն, որպէս զի դրոշմածը իմանայ թէ՝ չպէտք է ամաչէ քրիստոնէական անունից ու դաւանմունքից և ոչ էլ վախենայ հաւատքի թշնամիներից, այլ պէտք է պատրաստ լինի Յիսուս Քրիստոսի հաւատքի համար ամեն տեսակ թշնամանք ու նեղութիւն կրելու:

Հ. Ի՞նչ պէտք է անէ քրիստոնեան Դրոշմի շնորհքը պահելու համար:

Պ. Քրիստոնեան Դրոշմի շնորհքը պահելու համար, պէտք է ստէպ աղօթք անէ, բարի գործեր կատարէ, և չընայելով մարդկային նկատմունքներին՝ Յիսուս Քրիստոսի օրէնքի համեմատ ապրի:

Գլուխ Դ.

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԻՍԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հ. Ի՞նչ է Հաղորդութեան խորհուրդը:

Պ. Ս. Հաղորդութեան մէջ, հացի բովանդակ գոյութիւնը հրաշապէս փոխարկուած է Յիսուս Քրիստոսի մարմնին և գինու բովանդակ գոյութիւնը Նրա անգին արեան: Ուրեմն Հաղորդութիւնը մի խորհուրդ է որ հացի և գինու տեսակներիներքոյ, պարունակում է ճշմարտապէս, իսկապէս ու գոյացապէս մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարմինն, Արիւնը, Հոգին ու Աստուածութիւնը, մեր հոգևոր կերակուրը լինելու համար:

Հ. Ի՞նչպէս է կոչւում այս հրաշալի փոխարկութիւնը:

Պ. Այս հրաշալի փոխարկութիւնը կոչւում է Գոյացափոխութիւն:

Հ. Արդեօք միւնոյն Յիսուս Քրիստոսն է Հաղորդութեան մէջ որ երկնքումն է և որ երկրիս վրայ ամենասուրբ Կոյսից ծնուեց:

Պ. Այո՛, Հաղորդութեան մէջ ճիշտ միևնոյն Յիսուս Քրիստոսն է:

Հ. Ինչու՞ ես հաւատում թէ Հաղորդութեան խորհրդի մէջ ճշմարտապէս միևնոյն Յիսուս Քրիստոսն է գտնւում:

Պ. Ես հաւատում եմ թէ Հաղորդութեան խորհրդի մէջ ճշմարտապէս միևնոյն Յիսուս Քրիստոսն է գտնւում, որովհետև հէնց Ինքն է յայտնել այդ և թէ սուրբ Եկեղեցին է սովորեցնում ինձ:

Հ. Ի՞նչ է նշխարքը սրբագործութիւնից առաջ:

Պ. Նշխարքը՝ սրբագործութիւնից առաջ, հաց է:

Հ. Իսկ ի՞նչ է նշխարքը սրբագործութիւնից յետոյ:

Պ. Նշխարքը՝ սրբագործութիւնից յետոյ՝ հացի տեսակների ներքոյ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ճշմարիտ Մարմինն է:

Հ. Ի՞նչ կայ բաժակի մէջ սրբագործութիւնից առաջ:

Պ. Սրբագործութիւնից առաջ բաժակի մէջ կայ մի քանի կաթիլ ջրի հետ փոքր ինչ գինի:

Հ. Իսկ սրբագործութիւնից յետոյ ինչ

կայ բաժակի մէջ։

Պ. Սրբագործութիւնից յետոյ բաժակի մէջ՝ գինու տեսակների ներքոյ, կայ Մեր Տէր Յիսուս Քրիստոսի ճշմարիտ Արիւնը։

Հ. Ե՞րբ է կատարւում հացի և գինու փոխարկութիւնը Յիսուս Քրիստոսի Մարմնին ու Արեանը։

Պ. Հացի և գինու փոխարկութիւնը Յիսուս Քրիստոսի Մարմնին ու Արեանը ճիշտ այն ժամանակ է կատարւում երբ քահանան սուրբ պատարագի մէջ սրբագործութեան խօսքերն է արտասանում։

Հ. Ո՞վ է սրբագործութեան խօսքերին այնպիսի մեծ կարողութիւն տուել։

Պ. Նոյն Ինքն Յիսուս Քրիստոս՝ ամենակարող Աստուածն է տուել սրբագործութեան խօսքերին այսպիսի մեծ կարողութիւն։

Հ. Ուրեմն սրբագործութիւնից յետոյ հացից ու գինուց էլ ոչինչ չի՞ մնում։

Պ. Սրբագործութիւնից յետոյ, հացի և գինու միայն տեսակներն են՝ մնում։

Հ. Հացի և գինու տեսակներն ինչեր են։

Պ. Տեսակները՝ հացի և գինու քանակութիւնը և գրպի որպիսութիւններն են,

ինչպէս են՝ ձևը, գոյնը, համը։

Հ. Հացի տեսակների ներքոյ, Յիսուս Քրիստոսի միայն Մարմինն է գտնւում, ու գինու տեսակների ներքոյ միայն Նրա Արիւնը։

Պ. Թէ՝ հացի և թէ՝ գինու տեսակների ներքոյ էլ կենդանի Յիսուս Քրիստոսն ամբողջապէս է գտնւում, այսինքն Մարմնովն Արեամբը, Հոգւովն ու Աստուածութեամբը։

Հ. Յիսուս Քրիստոս աշխարհիս ամենն սրբագործւած նշխարքների մէջ էլ է ներկայ գտնւում։

Պ. Այո, Յիսուս Քրիստոս ամեն սրբագործւած նշխարքների մէջ էլ է ներկայ գտնւում։

Հ. Նշխարքը կոտրատելիս, Յիսուս Քրիստոսի Մարմինն էլ է կոտրատւում։

Պ. Նշխարքը կոտրատելիս, Յիսուս Քրիստոսի Մարմինը չի կոտրատւում, այլ հացի միայն տեսակներն են կոտրատւում։

Հ. Նշխարքի որ մասի մէջ է մնում Յիսուս Քրիստոսի Մարմինը։

Պ. Յիսուս Քրիստոսի Մարմինը՝ բաժանւած նշխարքի ամեն մասերի մէջ էլ ամբողջապէս է մնում։

Հ. Ինչու համար են Եկեղեցիների մէջ

Ամենասուրբ Հաղորդութիւնը պահում։

Պ. Նրա համար են եկեղեցիների մէջ Ամենասուրբ Հաղորդութիւնը պահում որպէս զի հաւատացեալներից երկրպագւի և հիւանդներին տրւի ըստ կարօտութեան։

ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ ԵՒ ԱՐԳԱՍԻՔՆԵՐԸ

Հ. Յիսուս Քրիստոս ինչու համար է հաստատել Ամենասուրբ Հաղորդութիւնը։

Պ. Յիսուս Քրիստոս երեք գլխաւոր պատճառի համար է հաստատել Ամենասուրբ Հաղորդութիւնը, 1. որպէս զի Նոր Օրէնքի մնայուն զոհը, 2. մեր հոգու կերակուրը, 3. իւր Զարչարանքների ու Մահուան մշտնջենաւոր յիշատակը և 4. առ մեզ ունեցած սիրոյ և յաւիտենական կեանքի անգին Գրաւականը լինի։

Հ. Ո՞րոնք են՝ այն գլխաւոր արդիւնքներն որ Ամենասուրբ Հաղորդութիւնն է առաջ բերում Իրան ընդունողի մէջ։

Պ. Այն գլխաւոր արդիւնքները, որ Ամենասուրբ Հաղորդութիւնն առաջ է բերում Իրան արժանապէս ընդունողի մէջ, սրանք են՝ 1. պահում և աճեցնում է հոգու կեանքը՝ որ շնորհքն է, ինչպէս որ

նիւթական կերակուրը զօրացնում և աճեցնում է մարմնի կեանքը. 2. թողութիւն է տալիս ներելի մեղքերին ու պահում մահացուներից, 3. հոգևոր մխիթարութիւն է պատճառում։

ԼԱՒ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՒԱԾ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հ. Քանի՞ բան է հարկաւոր լաւ հաղորդելու համար։

Պ. Լաւ հաղորդելու համար երեք բան է հարկաւոր՝ 1. Աստծու շնորհքի մէջ գտնւիլը 2. Կէս գիշերից մինչև հաղորդելու ժամանակակէտը ծոմ մնալը 3. ինչ ընդունելն իմանալ ու ջերմեռանդութեամբ Սուրբ Հաղորդութեանը մերձենալ։

Հ. Ի՞նչ է նշանակում շնորհքի վիճակի մէջ գտնւիլը։

Պ. Շնորհքի վիճակի մէջ գտնւիլը նշանակում է՝ ամեն մահուչափ մեղքից ազատ լինել, մաքուր խիղճ ունենալ։

Հ. Ի՞նչ մեղք է գործում նա որ հաղորդւում է իմանալով թէ մահուչափ մեղքի մէջ է գտնւում։

Պ. Նա որ հաղորդւում է իմանալով թէ

մեղքի մէջ է գտնուում մի սոսկալի Սրբապղծութիւն է գործում:

Հ. Ի՞նչ տեսակ ծոմ է պահանջուում հաղորդելու համար:

Պ. Հաղորդելու համար պահանջուում է բնական ծոմ, որն կոտրուում է կերակուրի և ըմպելիքի պէս առնուած բաների գործածութեամբը:

Հ. Երբէք թոյլ տրուած չէ՞ հաղորդել առանց ծոմ լինելու:

Պ. Թոյլ տրուած է այն հիւանդներին որ մահուան վտանգի մէջ են գտնուում և այն ժամանակ հաղորդութիւնը կոչուում է թոշակ:

Հ. Ի՞նչ ասել է՝ «ինչ բան ընդունելն իմանալը»:

Պ. «Ինչ բան ընդունելն իմանալը» ասել է՝ Քրիստոնէական վարդապետութեան մէջ այս խորհրդի վրայօք սովորեցրածը գիտենալ և հաստատապէս հաւատալ Նրան:

Հ. Ի՞նչ ասել է՝ ջերմեռանդութեամբ հաղորդել:

Պ. Ջերմեռանդութեամբ հաղորդելն, ասել է՝ թէ՝ խոնարհ ու համեստ անձի կեցուածքով, Ս. Հաղորդութեանը մերձենալ. և

հաղորդելուց առաջ՝ պատրաստութիւն տեսնել, և յետոյ՝ շնորհակալութիւն մատուցանել:

Հ. Ե՞րբ պարտականութիւն կայ հաղորդելու:

Պ. Պարտականութիւն կայ հաղորդելու ամեն տարի Զատկին, իւր ծխական եկեղեցում, նաև մահուան վտանգի մէջ:

Հ. Ո՞ր հասակից է սկսում ստիպել գատկական հաղորդութեան պատուիրանը կատարելու պարտականութիւնը:

Պ. Այն հասակից, երբ մանուկը կարող է պարտուպատշաճ պատրաստութիւններով այս խորհրդին մերձենալ:

Հ. Լա՞ւ և օգտակա՞ր բան է ստէպ հաղորդելը:

Պ. Շատ լաւ բան է ստէպ հաղորդելը, միայն թէ պարտուպատշաճ պատրաստութիւններով, և խոստովանահօր խորհրդին համեմատ կատարուի:

Հ Հաղորդելուց յետոյ Յիսուս Քրիստոս որչա՞փ ժամանակ է մնում մեզանում:

Պ. Հաղորդելուց յետոյ Յիսուս Քրիստոս այնչափ ժամանակ է մնում մեզանում

«իւր շնորհքովը,» որչափ որ մահուչափ մեղք չենք գործել. իսկ մնում է մեզանում «Իւր իսկական ներկայութեամբը» մինչև խորհրդական տեսակների սպառիլը:

ՊԱՏԱՐԱԳԻ ՍՈՒՐԲ ԶՈՀԸ

Հ. Հաղորդութիւնը միայն մի խորհուրդ է

Պ. Հաղորդութիւնը ոչ միայն մի խորհուրդ է, այլ նաև Նոր Օրէնքի մնայուն զոհը:

Հ. Ի՞նչպէս է կոչւում Նոր Օրէնքի այս զոհը:

Պ. Նոր Օրէնքի այս զոհը կոչւում է սուրբ Պատարագ:

Հ. Ի՞նչ է սուրբ Պատարագը:

Պ. Սուրբ Պատարագը Յիսուս Քրիստոսի Մարմնի և Արեան զոհն է, որը Խաչի զոհի յիշատակի համար, հացի և գինու տեսակների ներքոյ, նվիրւում է մեր խորանների վրայ:

Հ. Պատարագի զոհը Խաչի միևնոյն զոհն է:

Պ. Պատարագի զոհը՝ նրանով է նմանւում Խաչի զոհին, որ թէ Խաչի և թէ Պատարագի զոհի մէջ, Յիսուս Քրիստոսն է միանգամայն քահանան ու զոհը. միայն թէ նվիրելու կերպի մէջ է տարբերւում Պատարագի զոհը Խաչի զոհից:

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում նվիրելու

կերպի տարբերութիւնը,

Պ. Նրա մէջ է կայանում տարբերութիւնը, որ Խաչի զոհի մէջ Յիսուս Քրիստոս իսկապէս մեռաւ և իւր Արիւնը թափեց. մինչդեռ Պատարագի զոհի մէջ՝ որ Խաչի զոհի յիշատակն է, Փրկիչը զոհւում է առանց արիւն թափելու. բացի սրանից Խաչի զոհի մէջ մեր փրկագործութեան արդիւնքները լրացրեց, իսկ Պատարագի զոհովը վերոյիշեալ արդիւնքներն է մերձեցնում մեզի:

Հ. Ո՞վ է հաստատել Պատարագի սուրբ զոհը:

Պ. Նոյն ինքն Յիսուս Քրիստոս է հաստատել Պատարագի սուրբ զոհը, երբ վերջին ընթրիքում ամենասուրբը Հաղորդութեան խորհուրդը հաստատեց:

Հ. Պատարագի սուրբ զոհը ինչ վախճանների համար է մատուցւում Աստծուն:

Պ. Պատարագի սուրբ զոհը չորս վախճանի համար է մատուցւում Աստծուն 1. Նրան պատուելու ինչպէս որ պէտք է, 2. Նրա բարիքների փոխարէն շնորհակալ լինելու, 3. Նրան մեղմացնելու և մեր մեղքերի փոխարէն պարտուպատշաճ հատուցումն անելու, 4. մեզի հարկաւոր եղած

ամեն շնորհքները ընդունելու համար։

Հ. Լաւ բան է՞ ամեն օր սուրբ Պատարագ տեսնելը։

Պ. Շատ օգտակար բան է ամեն օր սուրբ Պատարագ տեսնելը, թէպէտև հրամայուած չէ։

Հ. Ի՞նչ պէտք է անել սուրբ Պատարագին շահաւէտ կերպով ներկայ գտնուելու համար։

Պ. Սուրբ Պատարագին շահաւէտ կերպով ներկայ գտնուելու համար, պէտք է սկզբից մինչև վերջը մեծ մտադրութեամբ ու ջերմեռանդութեամբ տեսնել նրան, մըտածելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի Չարչարանքների և Աստծու վրայ ու ջերմեռանդ աղօթքներ անել։



Գլուխ Ե.

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԱՅՍ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԼԱՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՇԱՆՁՒԱԾ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ ԽՂՃԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Հ. Ի՞նչ է ապաշխարութեան խորհուրդը։

Պ. Ապաշխարութիւնը՝ որ խոստովանութիւն էլ է կոչւում, Յիսուս Քրիստոսից հաստատուած մի խորհուրդ է, Մկրտութիւնից յետոյ գործուած մեղքերը թողնելու համար։

Հ. Լաւ խոստովանելու համար քանի բան պէտք է։

Պ. Լաւ խոստովանելու համար հինգ բան պէտք է 1. խիղճը քննել, 2. մեղքերի վրայ զղջալ և նրանց ատել, 3. այլևս նրանց չգործելու հաստատ առաջադրութիւն անել, 4. մեղքերը խոստովանել, 5. խոստովանահօրից դրուած ապաշխարանքը կատարել։

Հ. Ի՞նչպէս պէտք է խիղճը քննել։

Պ. Պէտք է խիղճը քննել՝ Աստծու

առաջ, հոգաբարձութեամբ մտաբերելով այն մեղքերն, որ մէկը խորհրդով, խօսքով, գործով ու զանցառութեամբ գործել է Աստծու և Եկեղեցու պատուիրանների, և իւր վիճակին յատուկ պարտքերի դէմ, և որոնց համենեւին չի խոստովանել:

Հ. Խիղճը քննելիս մեղքերի թիւն էլ պարտաւոր ենք հետազօտելու:

Պ. Խիղճը քննելիս պարտաւոր ենք մահուչափ մեղքերի թիւն էլ հետազօտել:

Հ. Խղճի քննութեան մէջ բացի մահուչափ մեղքերի թիւը հետազօտելուց՝ նրանց ինչ պարագայի մէջ գործած լինելու վրայ էլ պարտաւոր ենք մտածելու:

Պ. Պարտաւոր ենք մտածելու նաև այն պարագաների վրայ, որ մեղքի տեսակն են փոխում, կամ ներելի մեղքը մահուչափ են դարձնում:

ԶՂՋՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ:

Հ. Ի՞նչ է զղջումը:

Պ. Զղջումը սրտի մի ցաւ է, որով մէկն ատում է իւր գործած մեղքերը և առաջադրում է այլ ևս մեղք չգործել:

Հ. Ինչու համար պարտաւոր ենք զղջալու:

Պ. Պարտաւոր ենք զղջալու, որովհետև մեղանչելով Աստծու պատիժներին արժանացել ենք, բայց աւելի նրա համար՝ որ վշտացրել ենք Աստծուն՝ որ անհուն բարի է և ըստ Ինքեան արժանի է ամէն բանից վեր սիրելու:

Հ. Ի՞նչ պէտք է անենք այս զղջումն ունենալու համար:

Պ. Պէտք է բոլոր սրտով զղջում խնդրենք Աստծուց ու գրգռենք մեզանում՝ մտածելով թէ ինչ մեծ չարիք ենք գործել մեղանչելով:

Հ. Քանի՞ տեսակ զղջում կայ:

Պ. Երկու տեսակ զղջում կայ՝ կատարեալ և անկատար:

Հ. Ի՞նչ է կատարեալ զղջումը:

Պ. Կատարեալ զղջումը Աստծուն վրշտացրած լինելու ցաւն է, որովհետև Նա անհուն բարի և ըստ Ինքեան արժանի է սիրոյ. այս զղջումը կոչւում է նաև խորտակման զղջում:

Հ. Ինչո՞ւ համար խորտակման զղջումը կատարեալ է կոչւում:

Պ. Երկու պատճառի համար խորտակման զղջումը կատարեալ է կոչւում՝ 1.

որովհետև միայն Աստծու բարութիւնն նկատի է առնում, 2. այն զղջումով ընդունում ենք մեր մեղքերի թողութիւնը, էթպէտև մեզի վրայ մնում է մեր մեղքերը խոստովանելու պարտականութիւնը:

Հ. Ո՞րն է անկատար կամ բեկման զղջումը:

Պ. Անկատար կամ բեկման զղջումն այն է, որով ցաւում ենք վշտացնելու Աստծուն՝ որ մեր գերագոյն Դատաւորն է այսինքն՝ զղջում ենք այն պատիժների վախից, որոնց արժանացել ենք մեր մեղքերի պատճառով, այս կամ միւս աշխարհում:

Հ. Անկատար կամ բեկման զղջումը բաւական է թողութիւն ընդունելու:

Պ. Անկատար կամ բեկման զղջումը բաւական է մեղքերի թողութիւնն ընդունելու, այն ժամանակ որ միացած է խորհրդական արձակման հետ:

Հ. Մէկն ինչ չարիք է գործում մեղանչելով:

Պ. Այն չարիքն՝ որ մէկը գործում է ծանրապէս մեղանչելով, մանաւորապէս նրա մէջ է կայանում, որ այս մեղքով կորցնում է Աստծու շնորհքն ու արքայութիւնը

արժանանում Դժոխքի տանջանքներին և վշտացնում Աստծուն՝ մեր Տիրոջն ու հօրը, որը այնչափ բարիքներ է արել մեզ և որ այնչափ սիրում է մեզ, և անսահման իրաւունք ունի որ Իրան ամենից վեր սիրենք ու հաւատարմութեամբ ծառայենք

Հ. Արդեո՞ք պէտք է որ զղջումն ամեն մահուչափ մեղքերի վրայ տարածւի:

Պ. Այո՛, պէտք է որ զղջում ն ամեն գործած մահուչափ մեղքերի վրայ տարածւի:

Հ. Նա որ միայն ներելի մեղքեր է խոստովանում, պարտաւոր է ամենի վրայ էլ զղջալու:

Պ. Խոստովանութիւնը վաւերական դարձնելու համար, բաւական է նրանցից մի քանիսի վրայ զղջալ. բայց ամենի ներումն ընդունելու համար պէտք է բոլորի վրայ էլ զղջալ:

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում առաջադրութիւնը:

Պ. Առաջադրութիւնը կայանում է այն հաստատուն կամքի մէջ որ մէկն ունի այլ ևս մեղք չգործելու և՝ի գործ դնելու հարկաւոր միջոցները մեղքից փախչելու համար:

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում մեղքերի խոստովանութիւնը:

Պ. Խոստովանութիւնը կայանում է մեր մեղքերի որոշ ամբաստանութեան մէջ, որ անում ենք խոստովանահօրը նրանից արձակում և ապաշխարանք ընդունելու համար:

Հ. Ո՞ր մեղքերը պարտաւոր ենք խոստովանել:

Պ. Մենք պարտաւոր ենք խոստովանել բոլոր մահուշափ մեղքերը. բայց լաւ է ներելիներն էլ խոստովանել:

Հ. Ի՞նչպէս պէտք է ամբաստանենք մահուշափ մեղքերը:

Պ. Պէտք է ամբաստանենք մահուշափ մեղքերը, յայտնելով նրանց թիւը, տեսակը և այն պարագաները որոնք մեղքի տեսակը են փոխում, կամ ներելիները մահուշափ դարձնում:

Հ. Ի՞նչ պարտաւոր է անի նա որ իւր մեղքերի ճշգրիտ թիւը չի յիշում:

Պ. Նա որ իւր մեղքերի ճշգրիտ թիւը չի յիշում, պարտաւոր է ասել այն թիւը որ աւելի մօտ է ճշմարտութեանը:

Հ. Լաւ է՞ խոստովանում նա որ ամօթի պատճառով ճշմարտութիւնը չի ասում խոստովանահօրը:

Պ. Ով որ ամօթի պատճառով ճշմարտութիւնը չասէ խոստովանահօրը կամ մի մահուշափ մեղք պահելով, կամ ծանօթ թիւը չ'ասելով և կամ էլ հարկաւոր պարագաները չը յայտնելով, սրբապղծութիւն կգործէ:

Հ. Ի՞նչ պէտք է անէ նա որ գիտէ թէ լաւ չի խոստովանել:

Պ. Նա որ գիտէ թէ լաւ չի խոստովանել, պէտք է անվաւեր խոստովանութիւնները նորոգէ. և բացի նրանից, պէտք է նաև որ իւր գործած սրբապղծութիւնները յայտնէ:

Հ. Լաւ է՞ խոստովանում նա որ, սոսկուած լինելով, մոռացմամբ մի մահուշափ մեղք է բաց թողնում:

Պ. Լաւ է խոստովանում նա որ խիղճը փութաջանութեամբ քննելուց յետոյ, մոռացմամբ մի մահուշափ մեղք է բաց թողնում բայց պարտաւոր է հետեւել խոստովանութեան մէջ այս մեղքն ամբաստանել, եթէ միտքը գայ:

Հ. Ի՞նչպէս կընդերկայնաս խոստովանահօրը:

Պ. Կը չոքեմ ասելով՝ « օրհնիր ինձ, Հայր, որովհետեւ մեղանչել եմ, » և ինքս ինձ կը խաչակնքեմ:

Հ. Ինքդ քեզ խաչակնքելուց յետոյ ինչ կ՝ասես:

Պ. Ինքս ինձ խաչակնքելուց յետոյ՝ կասեմ « խոստովանիմ» աղօթքը, յետոյ մեղքերիս պարտուպատշաճ ամբաստանութիւնը կ՝անեմ:

Հ. Լա՞ւ բան է անցած կեանքից մի ծանրը մեղք ամբաստանելը:

Պ. Այո՛, մանաւորապէս երբ միայն նեռելի մեղքեր խոստովանած լինելով, ծառայում է ապահովացնելու զղջումն, առանց որի արձակումն անվաւեր է:

Հ. Մեղքերի ամբաստանութիւնն լրացրնելուց յետոյ ինչ կ՝անես:

Պ. Մեղքերիս ամբաստանութիւնը լրացրնելուց յետոյ, յարգութեամբ կը լսեմ խոստովանահօր ասածը, անկեղծ սրտով յանձն կ՝առնեմ ապաշխարանքը կատարելու, և սուրբ արձակումն տրւելիս՝ բոլոր սրտով կընորոգեմ զղջման ներգործութիւնը:

Հ. Արձակումն ստանալուց յետոյ ինչ կ՝անես

Պ. Արձակումն ստանալուց յետոյ՝

Աստծուց շնորհակալ կը լինեմ. կարելի եղածին չափ շուտ կը կատարեմ ապաշխարանքը, և ի՝ գործ կը դնեմ խոստովանահօր տւած խորհուրդները:

ԱՐՁԱԿՈՒՄՆ ՈՒ ԱՊԱՇԽԱՐԱՆՔԸ.

Հ. Ի՞նչ է արձակումը:

Պ. Արձակումն այն վճիռն է, որ քահանան տալիս է Յիսուս Քրիստոսի անունով ապաշխարողի մեղքերը թողնելու համար:

Հ. Ի՞նչ է հատուցումը կամ ապաշխարանքը

Պ. Հատուցումը կամ ապաշխարանքն այն աղօթքը կամ բարեգործութիւնն է, որ խոստովանահայրը դնում է ապաշխարողի վրայ նրա մեղքերի քաւութեան համար:

Հ. Ե՞րբ է կատարելու խորհրդական ապաշխարանքը:

Պ. Եթէ խոստովանահայրը ժամանակը չի որոշել, եղածին չափ շուտ, կատարելու է խորհրդական ապաշխարանքը:

Հ. Յաճախ խոստովանելը լա՞ւ բան է:

Պ. Լաւ է ամիսը գոնէ մի անգամ խոստովանելը, բայց նա՝ որ իմանում է թէ մահուչափ մեղքի մէջ է գտնւում աւելի մեծ արտորանօք պարտաւոր է խոստովանելու:

Գլուխ Զ.

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄԸ

Հ. Ի՞նչ է Վերջին Օծումը:

Պ. Վերջին Օծումը Յիսուս Քրիստոսից հաստատուած մի խորհուրդ է՝ մահուան վրտանգի մէջ գտնուող հիւանդներին հոգևոր և նաև ժամանակաւոր թեթևութիւն տալու համար:

Հ. Վերջին Օծման խորհուրդն ինչ արդիւնքներ է առաջ բերում:

Պ. Վերջին Օծման խորհուրդը հետևեալ արդիւնքներն է առաջ բերում՝ 1. աճեցնում է սրբարար շնորհքը. 2. ջնջում է ներելի մեղքերը, նաև մահուչափներն, որոնց վրայ հիւանդը զղջացած լինելով չի կարողանում խոստովանուել. 3. վերացնում է այն տկարութիւնը և թուլութիւնը որ բարին գործելու համար. ամենքս ըզգում ենք թէպէտ մեղքերի թողութիւնը ստանալուց յետոյ. 4. զօրութիւն է տալիս համբերութեամբ տանելու ցաւերը, փորձութիւններին դիմադրելու և սրբութեամբ

մեռնելու. 5 օգնում է մարմնաւոր առողջութիւն՝ ստանալու եթէ հոգու փրկութեանն օգտակար լինի:

Հ. Ե՞րբ պէտք է Վերջին Օծումն ընդունել:

Պ. Պէտք է Վերջին Օծումն ընդունել երբ հիւանդութիւնը վտանգաւոր է, և եթէ կարելի է՝ Սպաշխարութեան և Ս. Հաղորդութեան խորհուրդներն ընդունելուց յետոյ, և քանի որ մէկին իւր խելքը չի կորցրել:

Գլուխ Է.

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ

Հ. Ի՞նչ է քահանայութեան Կարգի խորհուրդը:

Պ. Քահանայութեան Կարգը այն խորհուրդն է որ, իշխանութիւն է տալիս կատարելու սրբազան պաշտօնները որոնք վերաբերում են թէ Աստծու ծառայութեան և թէ հոգիների փրկութեան: Այս խորհուրդը իրան ընդունողի հոգու մէջ դրոշմում է Աստուծոյ պաշտօնեաների կնիքը:

Հ. Ի՞նչ վախճան պէտք է ունենայ նա որ եկեղեցական վիճակն է ընդգրկում:

Պ. Նա որ եկեղեցական վիճակն է ընդգրկում, պէտք է ունենայ իբրև վախճան՝ միայն Աստծու փառքն ու հոգիների փրկութիւնը:

Հ. Մէկը կարող է ինքն իրանից եկեղեցական վիճակն ընտրել:

Պ. Ոչ ոք չի կարող ինքն իրանից եկեղեցական վիճակն ընտրել, այլ պէտք է Աստծուց կոչած լինի:

Հ. Ո՞ւրեմն վատ կ՚անէր նա որ առանց Աստուածային կոչման եկեղեցական վիճակն կ՚ընդգրկէր

Պ. Նա որ առանց Աստուածային կոչման ընդգրկելու լինէր եկեղեցական վիճակը, մեծ չարիք կգործէր և ինքն իրան դատապարտութեան մեծ վտանգի մէջ կը ձգէր:

Հ. Որոնք են հաւատացեալների պարտքերը դէպի նրանց, որոնք քահանայութեան կարգի կոչումն ունին:

Պ. Հաւատացեալները պարտաւոր են՝
1. իրանց գաւակներին լիուլի ազատութիւն տալու, որ Աստծու կոչմանը հետևեն,
2. Աստծուն աղօթելու, որ բարեհաճի բարի հովիւներ և եռանդուն պաշտօնեաներ պարգևելու Իւր Եկեղեցուն,
3. Առանձին յարգանք ունենալու դէպի նրանց, որոնք սուրբ կարգի միջոցով Աստծու ծառայութեանն են նուիրուել:

Գլուխ Ը.

ՊԱՍԿԸ.

Հ. Ի՞նչ է Պասկի խորհուրդը։

Պ. Պասկը մեր Տէր Յիսուս Քրիստոսից հաստատուած մի խորհուրդ է, որ մի սուրբ և անլուծանելի միաւորութիւն է հաստատում մարդու և կնոջ միջեւ, ու նրանց շնորհք է տալիս միմեանց սրբութեամբ սիրելու և իրանց զաւակին Քրիստոնէական դաստիարակելու։

Հ. Պասկի խորհուրդը մի մասնաւոր նշանակութիւն ունի։

Պ. Պասկի խորհուրդը նշանակում է այն միութիւնը, որ Յիսուս Քրիստոս ունի Սուրբ Եկեղեցու հետ՝ որ իւր հարսն է և մեր ամենասիրելի Մայրը։

Հ. Պարտաւոր են Աստծու շնորհքի մէջ գտնուել նրանք՝ որ Պասկի խորհուրդն են ընդունում։

Պ. Այո, նրանք որ Պասկի խորհուրդն են ընդունում, պարտաւոր են Աստծու շնորհքի մէջ գտնուել. ապա թէ ոչ,

սրբապղծութիւն կը գործեն։

Հ. Ո՞րն է պասկը կատարելու կերպը։

Պ. Քրիստոնեաների մէջ Պասկը կատարելու վաւերական և օրինաւոր միակ կերպը՝ Սուրբ Եկեղեցու օրէնքների համեմատ կատարելն է։

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՍՏԻԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Միակ Գլուխ

ՀԱՒԱՏՔԸ

Հ. Որո՞նք են քրիստոնէի փրկութեան համար հարկաւոր առաքինութիւնները:

Պ. Քրիստոնէի փրկութեան համար, հարկաւոր եղած առաքինութիւնները, երեք են՝ Հաւատքը, Յոյսն ու Սէրը:

Հ. Ի՞նչ է Հաւատքը:

Պ. Հաւատքը մեր հոգու մէջ հեղուած մի զերբնական առաքինութիւն է, որով մենք Աստծու հեղինակութեան վրայ հիմնուելով՝ հաւատում ենք թէ ճշմարիտ է այն ամեն ինչ, որ Ինքն է յայտնել և Եկեղեցու միջոցով առաջարկում է մեզ հաւատալու.

Հ. Ի՞նչպէս ենք ճանաչում Աստծուց յայտնուած ճշմարտութիւնները:

Պ. Մենք ճանաչում ենք Աստծուց յայտնուած ճշմարտութիւններն, Եկեղեցու

միջոցով՝ որ անսխալ է, այսինքն՝ Սրբազան Պապի միջոցով որ Սուրբ Պետրոսի յաջորդն է, և Եպիսկոպոսների միջոցով, որոնք այն Առաքեալների յաջորդներն, են, որ Յիսուս Քրիստոսից սովորեցին:

Հ. Արդեո՞ք Սրբազան Պապն անսխալ է:

Պ. Այո՛, Սրբազան Պապն այնպէս անսխալ է՝ ինչպէս որ Եկեղեցին անսխալ է, երբ իբրև Հովիւ ու Վարդապետ ամեն քրիստոնեաների խօսելիս՝, հաւատքի կամ բարքի վերաբերեալ ճշմարտութիւններ է «սահմանում:»

Հ. Մենք կարող ենք հասկանալ ամեն յայտնուած ճշմարտութիւնները:

Պ. Ո՛չ մենք չենք կարող հասկանալ բոլոր յայտնուած ճշմարտութիւնները, որովհետև հաւատքի ճշմարտութիւններից մի քանիսը «խորհուրդներ» են:

Հ. Ի՞նչ են խորհուրդները:

Պ. Խորհուրդները հաւատքի ճշմարտութիւններ են, որոնք մեր խելքի կարողութիւնից վեր են:

Հ Ինչու՞ համար պարտաւոր ենք հաւատալու հաւատքի ճշմարտութիւններին:

Պ. Որովհեան Աստուած որ անսխալ

ճշմարտութիւն է, նրանց յայտնել է և Եկեղեցու միջոցով առաջարկում է մեզ հաւատալու։

Հ. Փրկելու համար բաւական է, ընդհանուր և անորոշ կերպով, հաւատքի ամեն ճշմարտութիւններին հաւատալը։

Պ. Փրկելու համար բաւական չէ՝ ընդհանուր և անորոշ կերպով հաւատքի ամեն ճշմարտութիւններին հաւատալը, որովհետև կան մի քանի ճշմարտութիւններ, ինչպէս են՝ Աստծու Միութիւնն ու Երրորդութիւնը և մեր Փրկչի Մարդեղութիւնն ու Մահը, որոնց հարկաւորապէս ամենքն էլ պարտաւոր են յայտնի ու մասնաւոր հաւատք ընծայելու։

Հ. Ո՞րտեղ են պարունակւում այն գլխաւոր ճշմարտութիւնները որ Աստուած յայտնել է սուրբ Եկեղեցուն։

Պ. Այն գլխաւոր ճշմարտութիւնները, որ Աստուած յայտնել է սուրբ Եկեղեցուն, պարունակւում են առաքեալների հանգանակի կամ ըստ սովորութեան՝ «հաւատքի» մէջ։

ՅՈՅՍԸ

Հ. Յոյսն ինչ է։

Պ. Յոյսն Աստծուց մեր հոգու մէջ հեղուած մի գերբնական առաքինութիւն է, որով փափագում և ակնկալում ենք յաւիտենական կեանքը, որ Աստուած խոստացել է Իրա ծառաներին, ու նրան ձեռք բերելու հարկաւոր եղած շնորհքները։

Հ. Ինչու համար ենք պարտաւոր Աստծուց յուսալու արքայութիւնն ու նրան ձեռք բերելու հարկաւոր եղած շնորհքները։

Պ. Պարտաւոր ենք Աստծուց յուսալու արքայութիւնն ու նրան ձեռք բերելու հարկաւոր եղած շնորհքները, որովհետև Աստուած՝ Յիսուս Քրիստոսի արդիւնքների համար, խոստացել է տալու նրանց, որոնք բոլոր սրտով ծառայում են Իրան, և Ինքն ամենահաւատարիմ ու ամենակարող լինելով՝ միշտ պահում է Իւր խոստումը։

ՍԷՐԸ

Հ. Ի՞նչ է Սէրը։

Պ. Սէրն Աստծուց մեր հոգու մէջ հեղուած մի գերբնական առաքինութիւն է,

որով Աստծուն ամեն բանից վեր ենք սի-
րում Իրա համար, ու մեր ընկերոջը՝ մեր
անձին պէս՝ Աստծու սիրոյն համար։

Հ. Ինչու՞ համար պարտաւոր ենք Աստ-
ծուն սիրելու։

Պ. Պարտաւոր ենք Աստծուն սիրելու,
որովհետև Ինքն անսահման բարի է ու
կատարեալ, բացի սրանից Ինքն է հրա-
մայում մեզ այս բանը և որովհետև ան-
չափ բարիքներ ենք ընդունում Իրանից։

Հ. Ինչու՞ համար պարտաւոր ենք մեր
ընկերոջը սիրելու։

Պ. Նրա համար պարտաւոր ենք մեր
ընկերոջը սիրելու Աստծու սիրոյն հա-
մար, որովհետև Ինքն է հրամայում մեզ
այդ բանը, և որովհետև իւրաքանչիւր
մարդ Նրա պատկերն է։

Հ. Պարտաւոր ենք մեր թշնամիներին
էլ սիրելու։

Պ. Այո՛, պարտաւոր ենք մեր թշնա-
միներին էլ սիրելու, որովհետև նրանք էլ
մեր ընկերն են, և Յէ Յիսուս Քրիստոս
մանաւոր կերպով պատուիրել է այդ մեզ։

ՀԱՒԱՏՔԻ, ՅՈՒՍՈՅ ՈՒ ՍԻՐՈՅ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Արդեո՞ք պարտաւոր ենք հաւատքի
Յուսոյ ու Սիրոյ ներգործութիւններ անելու։

Պ. Այո՛ պարտաւոր ենք Հաւատքի, Յու-
սոյ ու Սիրոյ ներգործութիւններ անելու
երբ որ մեր բանաւորութիւնը բացվի, և
մահուան վտանգի մէջ գտնվինք. ստէպ էլ
մեր կեանքի ընթացքում, մասնաւորապէս
երբ հարկաւոր լինի մի փորձութեան յաղ-
թելու և կամ մի որևէ քրիստոնէական
պարտականութիւն կատարելու։

Հ. Լա՞ւ է անում նա որ ստէպ Հաւատքի,
Յուսոյ ու Սիրոյ ներգործութիւններ է անում։

Պ. Այո՛, շատ լաւ է անում նա որ ըս-
տէպ Հաւատքի, Յուսոյ ու Սիրոյ ներգոր-
ծութիւններ է անում, որովհետև քրիս-
տոնեան յաճախ այս ներգործութիւններն
անելով 1. աւելի դիւրութեամբ է պահում
այս առաքինութիւնները, որ այնչափ հար-
կաւոր են, 2. նրանց աճեցնում ու զար-
գացնում է իւր հոգու մէջ, 3. արտաքուստ
էլ արտայայտում է, 4. բազմաթիւ նե-
րողութիւններ է շահում։

Հ. Այս ներգործութիւնները միայն բերանով

ասելը բաւա՞կան է։

Պ. Ո՛չ, բաւական չէ՝ այս ներգործութիւնները միայն բերանով ասելը, այլ պէտք է նաև մտքի ուշադրութեամբն ու սրտի ներքին ջերմեռանդութեամբն ասել։

Հ. Մենք կարող ենք միայն մեր զօրութեամբն այս կամ քրիստոնէական առաքինութիւնների ուրիշ ներգործութիւնները արժանապէս անել։

Պ. Մենք մեզանից չենք կարող անել, այլ հարկաւոր է մեզ Աստծու շնորհքի օգնութիւնը, Որը միշտ տալիս է նրանց, որ բոլոր սրտով խնդրում են Իրանից։

Հ. Հաւատքի, Յուսոյ ու Սիրոյ աստուածաբանական առաքինութիւններից ո՞րն է մեծագոյնն ու գերազանցագոյնը։

Պ. Աստուածաբանական առաքինութիւններից մեծագոյնն ու գերազանցագոյնը՝ Սէրը՝ է, որի հետ ընկերանում է միշտ սրբարար շնորհքը և որը հոգևորապէս մեզ միացնում է Աստծու հետ և արժանացընում է արքայութեան։

Հ. Ո՞րն է Սիրոյ ապացոյցը։

Պ. Սիրոյ ապացոյցը՝ Աստծու պատուիրանների պահելն է ու ողորմութեան

գործեր կատարելը։

Հ. Ողորմութեան գործերը քանի՞ են։

Պ. Ողորմութեան գործերը տասն ու չորս են, եօթը մարմնաւոր և եօթը հոգևոր։

Հ. Որո՞նք են ողորմութեան մարմնաւոր գործերը։

Պ. Ողորմութեան «մարմնաւոր» գործերն են՝ սովածներին կերակրել, ծարաւներին խմացնել, մերկերին հագցնել, պանդխտներին իջևան տալ, հիւանդներին այցելել, բանտարկեալներին տեսութեան գնալ և մեռելներին թաղել։

Հ. Որո՞նք են ողորմութեան հոգևոր գործերը։

Պ. Ողորմութեան «Հոգևոր» գործերն են՝ տարակուսեալներին խորհուրդ տալ, տգէտներին սովորեցնել, մեղաւորներին խրատել, վշտացեալներին մխիթարել, ընկերոջ յանցանքները ներել, համբերութեամբ տանել անձերին որոնք մեզ նեղացնում են և աղօթել Աստծուն կենդանիների ու մեռելների համար։

ԱՂՕԹՔՆԵՐ

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ. ԱՄԷՆ:

Երկրպագում եմ Քեզ Աստուած իմ, սիրում եմ Քեզ բոլոր սրտով, շնորհակալ եմ Քեզանից ինձ ստեղծելուդ, քրիստոնեայ անելուդ և այս գիշեր պահելուդ համար: Քեզ եմ նվիրում բոլոր գործերս ու խնդրում եմ, որ հեռու պահես ինձ այսօր մեղքից և ազատես ամեն չարից. ամէն:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ

Ես հաւատում եմ հաստատապէս՝ որովհետև Աստուած՝ անսխալ ճշմարտութիւն, այսպէս յայտնեց սուրբ կաթուղիկէ եկեղեցուն ու Նրա միջոցով մեզ էլ է յայտնում թէ միայն մէկ Աստուած կայ և երեք աստուածային Իրարու հաւասար ու Միմեանցից զանազան Անձինք, որոնք կոչւում են Հայր, Որդի և Սուրբ Հոգի. և թէ Որդին մարդ եղաւ Սուրբ Հոգու զօրութեամբ ամենամաքուր կոյս Մարիամի որովայնում մարդկային մարմին ու Հոգի առնելով. և թէ մեզի համար խաչի վրայ

մեռաւ, յարութիւն առաւ, երկինք ելաւ, ուսկից պիտի գայ աշխարհիս վերջը բոլոր կենդանիներին ու մեռելներին դատաստան անելու, բարիներին յաւիտենական արքայութիւն ու չարերին յաւիտենական դժոխք տալու:

Դարձեալ նոյն պատճառով հաւատում եմ այն ամեն բաներին, որոնց հաւատում ու սովորեցնում է նոյն Սուրբ Եկեղեցին:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՈՅ

Ո՛վ Աստուած իմ, որովհետև ամեն բանի կարող, անհուն բարի ու ողորմած ես, յոյս ունիմ որ՝ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուս Քրիստոսի չարչարանքների ու մահուան արդիւնքների համար, ինձ կը տաս յաւիտենական կեանք, որին Դու՝ որ ամեն բանի մէջ հաւատարիմ ես, խոստացար տալու նրան, որ բարեպաշտ Քրիստոնէի պէս ապրի, ինչպէս որ ես առաջադրում եմ այսուհետև ապրելու քո սուրբ օգնութեամբդ:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ

Ո՛վ Աստուած իմ, որովհետև Դու գերագոյն ու կատարեալ բարի ես, սիրում եմ քեզ բոլոր սրտով և ամեն բանից վեր, և պատրաստ եմ ամեն բան կորցնելու քան թէ քեզ վշտացնելու և քո սիրոյդ համար էլ սիրում և ուզում եմ սիրել ընկերոջս իմ անձիս պէս։

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ՝ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր և թող մեզ զպարտիս մեր որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ ի չարէ։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

ՈՂՋՈՒՆԱՏՐՈՒԹԻՒՆ ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ

Ողջոյն քեզ, Մարիամ, լի շնորհօք, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես Դու ի կանայս, և

օրհնեալ է պտուղ որովայնի քո՝ Յիսուս։ Սրբուհի Մարիամ, մայր Աստուծոյ, բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս այժմ և ի ժամու մահուան մերոյ. ամէն։

ՀԱՆԳԱՆԱԿ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

Հաւատամ ի մի Աստուած՝ Հայրն ամենակալ յԱրարիչն երկնի և երկրի։ Եւ ի մի տէր մեր՝ Յիսուս Քրիստոս, յՈրդի Նորա միածին, որ յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ. ծնաւ ի՝ Մարիամայ Կուսէն, չարչարեցաւ ընդ Պոնտացւով Պիղատոսիւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ, էջ ի դժոխս, յերրորդ աւուր յարեաւ ի մեռելոց, համբարձաւ յերկինս. նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենակալի, ուստի գալոց է ի դատել զկենդանիս և զմեռեալս։ Հաւատամ ի Սուրբ Հոգին, ի սուրբ կաթուղիկէ Եկեղեցի, ի հաղորդութիւն սրբոց, ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մարմնոց, ի կեանս յաւիտենականս. ամէն։

Մտաբերենք Աստծու և Եկեղեցու պատուիրանները, խնդրելով շնորհք նրանց լաւ պահելու համար։

ԵՍ ԵՄ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ ՔՈ

1. Մի ունիցիս զայլ Աստուած առաջի իմ.
2. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն.
3. Յիշեա՛ զօր շաբաթուն սրբել զնա. այսինքն զկիւրակէս.
4. Պատուեա՛ զհայր քո և զմայր.
5. Մի սպանաներ.
6. Մի շնար.
7. Մի գողանար.
8. Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ.
9. Մի ցանկար կնոջ ընկերի քո.
10. Մի ցանկար ամենայնի որ նորա է։

1. Յաւուրս Կիւրակէից և տօնից տեսանել զպատարագ
2. Պահել զպահս և ծոմապահս հրամայեալս
3. Ի տարւոջ գոնէ մի անգամ խոստովանիլ.
4. Հաղորդիլ գոնէ ի տարւոջ մի անգամ, այսինքն ի Զատկի յարութեան Տեառն
5. Տալ զտասանորդս ընչից։

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԵՆՔ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻՆ ՄԵՐ ՊԱՇՏԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՆ ՈՒ ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆ ՍՐԲԻՆ

Ամենասուրբ Կոյս, Մայր Յիսուսի, և ամենազօր բարեխօսդ իմ. ես ինձ Քո մայրենի պաշտպանութեանդ եմ յանձնում, Ո՛վ ամենասիրելի Մայր. եղիր իմ ապաւէնս՝ ամեն կարօտութիւններիս մէջ, իմ մխիթարութիւնս՝ ամեն վշտերիս մէջ և իմ միջնորդն՝ ամենաօրհնեալ Որդուդ մօտ այս օր, կեանքիս ամեն օրերում, և մանաւանդ մահուանս ժամին։

Ո՛վ պահապան Սուրբ Հրեշտակ, սիրելի առաջնորդ իմ, ընդունիր ինձ համար Աստծուց շնորհք՝ քո փրկարար ազդեցութիւններիդ հնազանդելու և իմ քայլերս այնպէս ուղղելու, որ Աստծու պատուիրանների շաւղից ամենևին չը շեղուիմ։

Ո՛վ փառաւորեալ Սուրբ Պաշտպան, որ անունդ եմ կրում, պաշտպանիր ինձ և բարեխօսիր ինձ համար, որպէս զի կարենամ քեզի պէս աշխարհիս վրայ Աստծուն ծառայել և յաւիտեանս քեզի հետ Իրան երկինքը փառաւորել. ամէն։

ՀՐԵՇՏԱԿ ՏԵԱՌՆ

Հրեշտակ Տեառն աւետեաց կուսին Մարիամու—և յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ։ Ողջոյն քեզ Մարիամ . . . .

Ահաւասիկ կամ աղախին Տեառն—եղիցի ինձ ըստ բանի քում։ Ողջոյն քեզ, Մարիամ . . . .

Եւ Բանն մարմին եղև—և բնակեաց ի մեզ։ Ողջոյն քեզ, Մարիամ . . . .

Աղաչեա՛ վասն մեր սուրբ Աստուածածին—զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի։

Զշնորհս քո՛ աղաչեմք Տէր, հե՛ղ ի միտս մեր զի որ աւետեօք Հրեշտակին Քրիստոսի Որդւոյ քո զմարդեղութիւնն ծանեաք, ի ձեռն չարչարանաց և խաչի նորա ժամանեսցուք ի փառս յարութեան, Տէրամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ ամէն։

ՄԱՂԹԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ ՍՈՒՐԲ ԱՆՈՒԱՆ

Տէր ողորմեա՛,
Քրիստոս ողորմեա՛,
Տէր ողորմեա՛,
Յիսուս լուր մեզ,
Յիսուս անսա՛ մեզ,
Հայր երկնաւոր Աստուած,
Որդի Փրկիչ աշխարհի Աստուած
Հոգիդ Սուրբ Աստուած,
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած
Յիսուս Որդի Աստծոյ կենդանւոյ,
Յիսուս լոյս փառաց Հօր,
Յիսուս պայծառութիւն յաւիտենական լուսոյ,
Յիսուս թագաւոր փառաց,
Յիսուս արեգակն արդարութեան,
Յիսուս Որդի Կուսին Մարիամու,
Յիսուս սիրելի,
Յիսուս զարմանալի,
Յիսուս Աստուած հզօր,
Յիսուս Հայր հանդերձելոյ աշխարհին,

մեր ողորմեա՛

on God to show you in this what you do not know. Let every approach to God and every request for fellowship with Him be

sin and obedience, the entire giving up of His life to God. In Him we are dead to sin. As we sink down in humility and in deep

Յիսուս հրեշտակ մեծի խորհրդոյ,
Յիսուս ամենակարող,
Յիսուս ամենահամբեր,
Յիսուս ամենահնազանդ,
Յիսուս հեզ և խոնարհ սրտիւ,
Յիսուս սիրող ողջախոհութեան,
Յիսուս որ սիրես զմեզ,
Յիսուս Աստուած խաղաղութեան
Յիսուս Տէր կենաց,
Յիսուս տիպար առաքինութեանց,
Յիսուս նախանձասէր հոգւոց,
Յիսուս Աստուած մեր,
Յիսուս ապաստան մեր,
Յիսուս հայր աղքատաց,
Յիսուս գանձ հաւատացելոց,
Յիսուս հովիւ բարի,
Յիսուս լոյս ճշմարիտ,
Յիսուս յաւիտենական ճշմարտութիւն,
Յիսուս անսահման բարութիւն,
Յիսուս ճանապարհ մեր և կեանք
Յիսուս ուրախութիւն հրեշտակաց
Յիսուս թագաւոր նահապետաց,
Յիսուս ուսուցիչ առաքելոց,

ողորմեա՛ մեզ,

Յիսուս վարդապետ աւետարանչաց,
Յիսուս զօրութիւն մարտիրոսաց,
Յիսուս լոյս խոստովանողաց,
Յիսուս մաքրութիւն կուսանաց,
Յիսուս պսակ ամենայն սրբոց,
Քաւիչ մեր Յիսուս խնայեա՛ ի մեզ։
Քաւիչ մեր Յիսուս անսա՛ մեզ։
Յամենայն չարէ,
Յամենայն մեղաց,
Ի բարկութենէ քումմէ,
Ի դաւաճանութենէ դիւին,
Ի յոգւոյ պոռնկութեան,
Ի յաւիտենական մահուանէ,
Յանփոյթ առնելոյ զշնորհաց քոց,
Վասն խորհրդոյ սուրբ մարդեղութեան Քո,
Վասն ծննդեան Քո,
Վասն մանկութեան Քո,
Վասն Աստուածային կենաց Քոց,
Վասն աշխատանաց Քոց,
Վասն տագնապելոյ և չարչարանաց Քոց,
Վասն խաչի և լքման Քո,
Վասն նուաղման Քո,

Յիսուս ողորմեա՛ մեզ, ողորմեա՛ մեզ,

Վասն մահուան և թաղման Քո,
Վասն յարութեան Քո,
Վասն համբարձման քո,
Վասն ուրախութեան Քո,
Վասն փառաց Քո,
Գոհն Աստուծոյ, որ բառնաս ըզ-
մեղս աշխարհի, խնայեա՛ 'ի մեզ
Տէր։
Գոհն Աստուծոյ, որ բառնաս ըզ-
մեղս աշխարհի, անսա՛ մեզ Տէր։
Գոհն Աստուծոյ, որ բառնաս ըզ-
մեղս աշխարհիս, ողորմեա՛ մեզ։
Յիսուս լսո՛ւր մեզ։
Յիսուս անսա՛ մեզ։

ԱՂՕԹՔ

Տէր Յիսուս Քրիստոս, որ ասացեր՝ հայ-
ցեցէ՛ք և ընկալջիք, խնդրեցէ՛ք և գտ-
ջիք, բաղխեցէ՛ք և բացցի ձեզ. տո՛ւր հայ-
ցողացս, աղաչեմ՛ք. զաստուածային սէր
Քո, զի սիրեսցուք զՔեզ բոլորով սրտիւ
և անդադար փառաւորեսցուք զՔեզ բա-
նիւ և անդեամբ. որ կենդանի ես և թագա-
ւորես յաւիտեանս. ամէն։ Փառք Հօր և
Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

Ով Աստուած իմ, երկրպագում ու սի-
րում եմ Քեզ բոլոր սրտով, շնորհակալ
եմ Քեզանից ինձ ստեղծելուդ, քրիստո-
նեայ անելուդ, և այս օրս պահելուդ հա-
մար։ Քեզ եմ նվիրում ինչ բարիք որ
գործեցի, և խնդրում եմ որ, ազատես ինձ
ամեն չարից։

Աղաչում եմ, Տէր, օրվանս ընթացքում
ինձ արած շնորհքներին պսակիր՝ առաքե-
լով Սուրբ Հոգուն, որ միտքս լուսաւորէ
և ճանաչեցնէ ինձ այսօր գործած մեղքե-
րըս, որպէս զի նրանց վրայ զղջալով ար-
ժանի լինիմ թողութիւն գտնել անսահ-
ման բարութիւնից. ամէն։

Քննիր քեզ, եթէ՝

Աղօթքդ եռանդեամբ ու մտադրութեամբ
արիր — հայհոյեցիր — նիրակի ու տօն օ-
րերը պատարագից զրկուեցիր քո յանցան-
քովդ — այս օրերը առանց հարկաւորու-
թեան աշխատեցար — ծնողներիդ, մեծաւոր-
ներիդ հնազանդեցիր — յարգեցիր նրանց

—ուրիշին չարութեամբ ծեծեցիր, յիշող ուիր—գայթակղութիւն տուիր, անարկեշտ բաների վրայ նայուածք նետեցիր—անհամեստ խօսակցութիւն, գործեր արիր—վատ բաների վրայ հաճոյքով մտածեցիր—չար բաղձանքներին հաւանեցար—լկտի երգեր երգեցիր—չար գրքեր կարդացիր—գողութիւն արիր—սուտ խօսեցար—ուրիշի անունը կոտրեցիր—չարիքը կամեցար—անվաւեր խոստովանութիւն արիր—արգելուած օրերը պահքդ չարութեամբ կերար—հպարտացար—ագահութիւն արիր—նախանձեցար—որկրամոլութիւն արիր—ծոյլ գտնուեցար:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂՋՄԱՆ

Ո՛վ Աստուած իմ, որովհետև Դու անհուն բարի ես, Քեզ ամեն բանից վեր եմ սիրում, զղջում ու ցաւում եմ բոլոր սրտով Քեզ վշտացնելուս համար ու հաստատապէս առաջադրում եմ քո սուրբ օգնութեամբդ, այլ ևս մեղք չը գործելու, ու մասնաւորապէս մեղքի առիթներից փախչելու:

ՄԵԶ ՅԱՆՁՆԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ, ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ, ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆ ՍՐԲԻՆ:

Այլելիր, Տէր, մեր բնակարանին ու հեռացրու նրանից թշնամու ամեն դարանները, թող քո սուրբ հրեշտակները այստեղ բնակւին՝ մեզ խաղաղութեան մէջ պահելու համար, ու քո սուրբ օրհնութիւնդ միշտ մեր վրայ լինի Տէրն մեր Յիսուս Քրիստոսով:

Քո պաշտպանութեան հովանաւորութեանն ենք ապաւինում, ով Սուրբ Աստուածածին մի մերժիր մեր աղաչանքները մեր կարօտութիւնների մէջ, այլ փրկիր մեզ ամեն վտանգից, ով փառաւորեալ և օրհնեալ Սուրբ Կոյս:

Ո՛վ Աստծու հրեշտակ՝ որ իմ պահապանս ես, լուսաւորիր, ուղղիր, պահպանիր ու կառավարիր ինձ՝ որ վերնական ճշմարտութեամբ քեզ եմ յանձնուել:

Եւ դու, ով իմ պաշտպան սուրբս, խնամիր և յանձնիր ինձ Աստծուն որ այս գիշեր պահէ հոգիս ու մարմինս թշնամու որոգայթներից որպէս զի առանց մեղքի անցնելով, կարենամ դարձեալ փառաւորել Աստծուն, ամէն:

ԱՂՕԹԵՆՔ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՒ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օրհնէր, Տէր, ծնողներիս, ազգականներիս, բարերարներիս, հոգևոր ու մարմնաւոր մեծաւորներիս, թշնամիներիս։ Օգնէր աղքատներին, ազատութիւն շնորհիր բանտարկեալներին, մխիթարութիւն՝ վշտացեալներին, նաւահանգիստ՝ նաւորդներին, առողջութիւն՝ հիւանդներին ու բարի մահ՝ հոգեվարքներին։ Դարձրու, Տէր, մոլորեալներին, լուսաւորիր անհաւատներին։

Աստուած բարութեան ու ողորմութեան, զթա քաւարանի անճար հոգիներին, վերջ տուր նրանց տանջանքներին, հանգիստ ու յաւիտենական լոյս պարգևիր նրանց՝ որոնց համար պարտաւոր եմ աղօթելու։

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿՈՒՍԻ ԼԻԹԱՆԻԱՆ

Տէր ողորմեա՛,
Քրիստոս ողորմեա՛,
Տէր ողորմեա՛,
Քրիստոս լսուր մեզ,
Քրիստոս անսա՛ մեզ,
Հայր երկնաւոր Աստուած,
Որդի փրկիչ աշխարհի Աստուած,
Հոգիդ Սուրբ Աստուած,
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած
Սրբուհի Մարիամ,
Սուրբ Աստուածածին,
Սուրբ Կոյս կուսանաց,
Մայր Քրիստոսի,
Մայր աստուածային շնորհաց,
Մայր մաքուր,
Մայր սուրբ,
Մայր անարատ,
Մայր անբիծ,
Մայր սիրելի,
Մայր սքանչելի,
Մայր բարի խորհրդոյ,

աղօթեսա՛ մեզ, վասն մեր ողորմ. մեզ,

Մայր Արարչին,
Մայր Փրկչին,
Կոյս իմաստուն,
Կոյս յարգոյ,
Կոյս քարոզելի,
Կոյս հզօր,
Կոյս գթած,
Կոյս հաւատարիմ,
Հայելի արդարութեան,
Աթոռ իմաստութեան,
Պատճառ մերոյ խնդութեան,
Անօթ հոգևորական,
Անօթ պատուելի,
Անօթ ընտիր աստուածպաշտութեան,
Վարդ խորհրդական,
Աշտարակ Դաւթեան,
Աշտարակ փղոսկրեայ,
Տուն ոսկեղէն,
Տապանակ ուխտի,
Դուռն երկնից,
Աստղ առաւօտեան,
Առողջութիւն հիւանդաց,
Ապաստան մեղաւորաց,

Մեր դատի տքելոյ

Մխիթարիչ վշտացելոց,
Օգնական քրիստոնէից,
Թագուհի հրեշտակաց,
Թագուհի նահապետաց,
Թագուհի մարգարէից,
Թագուհի առաքելոց,
Թագուհի մարտիրոսաց,
Թագուհի խոստովանողաց,
Թագուհի կուսանաց,
Թագուհի ամենայն սրբոց,
Թագուհի առանց սկզբնական արատոյ յղացեալ,
Թագուհի ամենասուրբ վարդարանի,
Գառն Աստուծոյ որ բառնաս ըզմեղս աշխարհի, խնայեա՛ ի մեզ Տէր։
Գառն Աստուծոյ որ բառնաս ըզմեղս աշխարհի, անսա՛ մեզ Տէր։
Գառն Աստուծոյ որ բառնաս ըզմեղս աշխարհի, ողորմեա՛ մեզ։
Աղօթեա՛ վասն մեր, սուրբ Աստուածածին, զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի

ԱՂՕԹՔ

Աստուած անճառելի ողորմութեան, որ ոչ միայն մարդ, այլ և որդի մարդոյ լինել հաճեցար. և ծնանելով ի կուսէ՝ զմայր ի յերկրի ստացար որ զԱստուած ունէիր հայր ի յերկինս. տուր մեզ աղաչեմք զյիշատակ նորա յօժարութեամբ կատարել. զմայրութիւն նորա գերագոյն յարգանօք պատուել, գերազանցագոյն վսեմութեան նորա զմեզ խոնարհութեամբ հպատակել, որ զքեզ Հոգւով Սրբով յղացաւ, զքեզ կուսութեամբ ծնաւ, և զքեզ ի յերկրի ինքեան հնազանդ կալաւ զՏէրդ մեր Յիսուս Քրիստոս: Որ կենդանի ես և թագաւորես ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյն յաւիտեանս. ամէն:

ՊԱՂԱՏԱՆՔ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՄԱՐԻԱՄ

Միտքդ բեր, ով գթած Կոյս Մարիամ Աստուածածին. որ ամենևին լսած չէ՝ թէ մէկը քո պաշտպանութեանդ ապաւինած քեզ օգնութեան կանչած ու քո խնամքին իրան յանձնած լինի. Դու նրանից երեսդ դարձրած լինիս: Ես էլ նոյն յուսով

զօրացած քեզ եմ գալիս ու դիմում, քո առջևդ եմ լալիս ու ողբում, ով Կոյսերի Կոյս քաղցր Մայր, Բանին Աստծու Մայր, իմ այս խօսքերից երես մի դարձնե՛ր, այլ սիրով ժամկ արա և ընդունիր աղաչանքներս:

Յիսուս, Մարիամ, Յովսէփ, ձեզ
եմ տալիս սիրտս ու հոգիս.
Յիսուս, Մարիամ, Յովսէփ, ինձ
հետ եղէք հոգեվարքիս.
Յիսուս, Մարիամ, Յովսէփ, ձեր
ձեռը տամ խաղաղ՝ հոգիս:
Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ. Ամէն:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Խղճի քննութիւնից առաջ:

Ո՛վ ամենասիրելի Փրկիչդ իմ, տուր ինձ շնորհքդ որ կարենամ հոգուս փրկութեան ու քո փառքիդ համար, ապաշխարութեան խորհրդին արժանապէս մերձենալու:

Ո՛վ ամենասուրբ Կոյս՝ Յիսուսի և իմ Մայր, ընդունիր ինձ համար քո օրհնեալ Որդուցդ բոլոր մեղքերս ճանաչելու, ատելու, և անկեղծաբար խոստովանելու շնորհքը:

ԽԻՂՃԸ ԼԱՒ ՔՆՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻ ՔԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

1. «Խիղճը քննելուց առաջ.» Միտքը ամփոփել, մտադրութեամբ ու ջերմեռանդութեամբ Աստծու օգնութիւնը խնդրել, վերը դրած աղօթքն ասելով, մեր մեղքերը ճանաչելու ու նրանց վրայ ճշմարտապէս զղջալու համար:

2. «Խիղճը քննելիս.» Փութով փնտռել թէ ինչ մեղքեր ենք գործել—արդեօք նիւթը ծանր էր կամ թեթև—կատարեալ հաւանութեամբ գործեցինք թէ անկատարքանի անգամ նրանց մէջ ընկանք—արդեօք տեղի ունեցան այնպիսի պարագաներ որ կարող էին մեղքի տեսակը փոխել խոստովանութեան մէջ յայտնելու համար:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ

Գնա՛, չոքիր քահանայի առաջ. խաչակնքիր քեզ և յետոյ ասա՛

Խոստովանիմ առաջի Աստուծոյ ամենակարողի և երանուհի Մարիամու միշտ կուսին, երանելի Միքայէլի հրեշտակապետին՝ երանելի Յովհաննու Մկրտչին՝ սրբոց

առաքելոցն Պետրոսի և Պողոսի և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին և ամենայն սրբոց և առաջի քո, Հայր սուրբ. քանզի մեղայ յոյժ խորհրդով բանիւ և գործով. վա՛յ ինձ, վա՛յ ինձ և յաւէտ վա՛յ ինձ:

Ասա թէ՝

Որչափ ժամանակից է, որ չես խոստովանուել:

Ընդունել ես արձակումն թէ ո՞չ,

Եթէ ապաշխարանքդ կատարել ես,

Եթէ անցած խոստովանութեանդ մէջ մոռացել կամ չես ասել մի մեղք:

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԽՎԱՅԻ ԱՍՏԾՈՒ ՊԱՏԻՐԱՆՆԵՐԻ ՎՐԱՅ

ԵՍ ԵՄ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՔՈ, ՄԻ ՈՒՆՈՒՑԻՍ ԶԱՅԼ ԱՍՏՈՒԱԾ ԱՌԱՋԻ ԻՄ:

Այսա եթէ՝ 1. աղօթքդ չես արել (որչափ ժամանակից ի վեր). 2. նրա մէջ կամաւոր մտքի ցնդումներ ունեցել ես .3. հաւատքի ճշմարտութիւնների վրայ երկմտել ես. 4. քրիստոնեայ կամ ուղղափառ լինելուդ վրայ ամաչել ես. 5. կախարդութիւններին, հմայութիւններին մտիկ արել ես, 6. կախարդական կամ հաւատքի դէմ գրքեր պահել, կարդացել ես. 7. երազներին և ուրիշ աւելորդապաշտութիւններին հաւատացել ես:

ՄԻ ԱՌՆՈՒՑՈՒՍ ԶԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՔՈ ԸՆԴՈՒՆԱՅՆ

1. պարապ, սուտ, չար բանների համար երդում արել ես. 2. Աստծու անունն առանց յարգանքի յիշել ես. 3. հայհոյել ես, Աստծու դէմ տրտնջացել ես. 4. արած ուխտերդ կատարել ես. 5. անիծել ու չարամաղթել ես (սրտով թէ միայն լեզուով):

ՅԻՇԵԱ ԶՕՐ ՇԱԲԱԹՈՒՆ ՍՐԲԵԼ ԶՆԱ, ԱՅՍԻՆՔՆ ԶԿԻՒՐԱԿԵՍ

1. Կիւրակի ու տօն օրերը պատարագ տեսել ես, պատարագին ուշ հասել ես, կամ լաւ չես տեսել. եկեղեցու մէջ խօսել, ծիծաղել, անպարկեշտ ես եղել. 2. առանց հարկաւորութեան կամովին աշխատել, ուրիշին էլ աշխատեցրել ես:

ՊԱՏՈՒԵԱ ԶՇԱՅՐ ՔՈ ԵՒ ԶՄԱՅՐ

1. Ծնողներիդ, մեծաւորներիդ, վարժապետներիդ, յարգել ես—նրանց պատասխան դարձրել — նախատական խօսքեր ասել — ծաղրել, պակասութիւնները յայտնել—կամեցել ես ծեծել—նրանց մահուան ցանկացել ես—բարկացրել ու սիրտը կոտրել ես —նրանց հնազանդել ես (ի՞նչ բանի մէջ):

ՄԻ ՍՊԱՆԱՆԵՐ

1. Ուրիշին չարութեամբ ծեծել, վիրաւորել, սպանել ես՝ անձամբ կամ ուրիշի ձեռքով. 2. անարգել, նախատական խօսքեր ասել ես. 3. մէկին ատել, նրա դէմ ոխ պահել, ու նրանից վրէժ առել ես.

4. ուրիշին գայթակղեցրել ես՝ խօսքով կամ գործով մեղքի մէջ ձգելով 5. խռովութիւն ու թշնամութիւն սերմանել ես 6. օգնել ես մէկին որ չարգործէ։

ՄԻ ՇՆԱՐ։ ՄԻ ՑԱՆԿԱՐ ԿՆՈՋ ԸՆԿԵՐԻ ՔՈ։

1. «կամովին» աղտեղի մտածմունքների մէջ կեցել ես, հաւանել ես նրանց. 2. անհամեստ գործելու ցանկացել ես. 3. «կամովին» չար ակնարկներ նետել ես անվայել բաների վրայ. 4. անհամեստ խօսքեր, պատմութիւններ, երգեր, ասել կամ հաճոյքով լսել ես. 5. անվայել ինչ արել ես, անձիդ պատիւը չես պահել, ապօրինի կատակներ արել ես. 6. անմեղներին չար բան սովորեցրել ես, կամ ուրիշի անկման պատճառ եղել ես.

ՄԻ ԳՈՂԱՆԱՐ։

ՄԻ ՑԱՆԿԱՐ ԱՏԵՆԱՅՆԻ՝ ՈՐ ՆՈՐԱ Է։

1. Գողութիւն արել ես (ասա եթէ ծանր էր նիւթը կամ թեթև) ծնողներից, ուրիշից, գողացած բանը յետ չես դարձրել 2. փափաք ունեցել ես գողանալու. 3. առուտուրի մէջ խաբէութիւն արել ես.

4. գտած բանը տիրոջը չես դարձրել. 5. կեղծ ստակ կամաւ գործածել ես. 6. գողութեան կամ ուրիշին վնասելու մասնակցել ես օգնելով, յորդորելով.

ՄԻ ՍՈՒՏ ՎԿԱՅԵՐ ԶԸՆԿԵՐԵ ՔՈՒՄՄԵ

1. Սուտ ասել ես ուրիշին վնասելու համար. 2. սուտ վկայութիւն տուել ես. 3. ընկերոջդ լաւ անունը կոտրել ես, նրա պակասութիւններն առանց հարկաւորութեան յայտնել ես. 4. ընկերոջդ բամբասել, զրպարտել ես. 5. ընկերոջդ վրայ եղած բամբասանքին հաճոյքով ականջ կախել ես. 6. ուրիշի գաղտնիքը յայտնել ես։

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԻՐԱՆՆԵՐԸ

ՊԱՇԵԼ ԶՊԱՇՍ ԵՒ ԶԾՈՄԱՊԱՇՍ ՇՐԱՄԱՅԵԱԼՍ

1. Պահքդ կերել ես. (առանց հարկաւորութեան, առանց տեսրինումն խնդրելու), 2. ուրիշին պատճառ եղել ես որ պահքն աւրէ.

Ի ՏԱՐԻՈՋ ԳՈՆԵ ՄԻ ԱՆԳԱՄ ԽՈՍՏՈՎԱՆԻԼ

1. Տարին անց կացրել ես առանց և ոչ իսկ մի անգամ խոստովանելու. 2. անվաւեր խոստովանել ես մահուշափ

մեղք պահելուդ, առաջադրութիւն չ'անելուդ, զղջում չ'ունենալուդ համար. 3. ուրիշին պատճառ եղել ես որ խոստովանութեան մէջ մեղք պահէ, ասելով թէ մեղք չէ.

ՀԱՂՈՐԴԻԼ Ի ՏԱՐՈՒՈՂ ԳՈՆԵ ՄԻ ԱՆԳԱՄ, ԱՅՍԻՆՔՆ Ի ՋԱՏԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ

1. Ցատկական հաղորդուելու պարտքդ չես կատարել. 2. մահուշափ մեղքով ընդունել ես ամենասուրբ Հաղորդութիւնը։ 3. Պատճառ ես եղել որ ուրիշներն էլ Սրբութիւն չ'առնեն այս օրերը.

ԵՕԹԸ ՄԱՀՈՒՉԱՓ ՄԵՂՔԵՐԻ ՎՐԱՑ

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

1. Շատ սիրել ես որ քեզ գովեն, ուրիշներից գերադասեն. 2. քեզ գովել ես, ուռել ես հագուստներիդ, ձերքերիդ, ազնըւութեանդ համար. 3. ուրիշներին վար դարկել ես. 4. քեզանից մեծի երեսը կեցել, և չ'ես ուզեցել ուրիշների խրատներին մտիկ անել. 5. տրտմել ես երբ քեզ բանի տեղ չ'են դրել, չ'են գովել կամ մոռացել են. 6. քեզ հաւանել ես.

His beloved Son, and can be satisfied with nothing less in those who draw nigh to Him. Enter deep into God's holy presence in the boldness which the blood gives, and in the assurance that in Christ you are most well-pleasing. In Chirst you are within the veil. You have access into the very heart and love of the Father. This is the *great object of*

The manna of one day was corrupt when the next day came. I must every day have fresh grace from heaven, and I obtain it only in direct waiting upon God Himself. Begin each day by tarrying before God, and touching Him touch you.

ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

1. Կարծրասիրտ ես եղել ուրիշների նըկատմամբ. 2. սիրտդ շատ կապել ես աշխարհային բաներին. 3. անողոք ես եղել աղքատների ձայնին.

ՆԱԽԱՆՁ

1. Նախանձել ես ուրիշների ունեցած ձիրքերի կամ ստացուածքի վրայ, 2. տրտըմել ես նրանց բարիքի և ուրախացել ես նրանց վնասի վրայ։

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

1. Բարկացել ես. անհամբեր ես եղել. 2. այնպէս սաստիկ վրդովուել ես որ արածդդ չես իմացել. 3. ուրիշի հետ խռովել ես. 4. ուրիշներին բարկացրել ես, կուել ես. 5. քէն ես պահել, բարկութիւնդ հանել ես. բարկացրել ես.

ԾՈՒԼՈՒԹԻՒՆ

1. Անփոյթ ես գտնուել քրիստոնէական պարտքերդ սովորելու. 2. ժամանակդ պարապ անց կացրել ես. 3. ծուլութիւն արել ես աղօթելու, եկեղեցի գնալու համար

ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹԻՒՆ

1. Հափից դուրս կերել կամ այնչափ խըմել ես որ խելքդ կորցած լինիս 2. շատ շտապով, անյագաբար, սաստիկ ախորժակով, դողդողացել ես ուտել խմելու համար.

ԲՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ

Եթէ ամօթալի մեղքով հեշտացել ես ինչ կերպով որ լինի, մտքով, խօսքով, գործով։

ԽԻՂՃԸ ՔՆՆԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ

Պետք է մտածել մեղքի չարութեան վրայ, այսինքն՝ թէ վշտացրել ու տհաճութիւն եմ պատճառել Աստծուն որ անսահման բարի է ու կատարեալ և այնչափ բարիքներ է արել ինձ—պատճառ եմ եղել Յիսուս Քրիստոսի չարչարանքներին ու մահուան—կորցրել եմ Աստծու շնորհքը, արքայութիւնը և արժանացել եմ դժոխքի յաւիտենական ու քաւարանի ժամանակաւոր տանջանքներին։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂՋՄԱՆ

Ողորմիր ինձ, ով արիւնաթաթախ խաչելեալդ իմ Յիսուս, զղջում եմ Քեզ իմ

ful the Seek wholly Spirit yield- Wait

VICTORY LEAGUE
18 So. Pack Square, Asheville, North Carolina

LEANING ON THE EVERLASTING ARMS

մեղքերով վշտացնելուս համար, ցաւում եմ, որովհետև կորցրի Քո շնորհքդ ու արքայութիւնը, և արժանացայ դժոխքի յաւիտենական տանջանքներին։ Ո՜հ, ինչ կը պատահէր իմ հոգուս, եթէ արդարութեամբ վարուէիր իմ հետ։

Բայց ամենից աւելի նրա համար եմ խորշում մեղքերիցս, որովհետև անարգեցի Քեզ՝ իմ Ստեղծողիս, Հօրս, Փրկչիս, և անչափ բարի և անսահման սիրելի Աստծուս։ Ո՜հ ապերջանիկ օրեր, որ այնպէս չարաչար անցկացրի Տիրոջս վշտացնելու և իմ հոգիս կորչնելու համար։ Երանի՜ թէ մեռած լինէի քանի որ շնորհքի մէջ էի գտնուում, քան թէ այնպիսի մեծ չարիք գործէի։ Բայց հիմայ վստահանալով Քո օգնութեան վրայ՝ առաջադրում եմ էլ Քեզ չը վշտացնելու և մեղքի ամեն առիթներից փախչելու։

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

Նախ եւ առաջ շնորհակալ եղիր Աստծուց՝ մեղքերդ թողնելով քեզ արած մեծ բարերարութեան փոխարէն. շուտով

կատարիր խոստովանահօր դրած ապաշխարանքը, կրկին առաջադրիր փախչելու մեղքից ու նրա առիթներից։

ՅԵՏՈՅ ԱՍԱ ԱՅՍ ԱՂՕԹՔԸ

Որչափ բարի գտնուեցար իմ նկատմամբ ով Տէր իմ։ Փոխանակ ինձ պատժելու այնչափ գործած մեղքերիս պատճառով, այս սուրբ խոստովանութեան մէջ՝ Քո անհուն ողորմութեամբդ՝ բոլորին էլ ներեցիր։ Վերստին բոլոր սրտով զղջում եմ ու խոստանում, որ Քո սուրբ շնորհքովդ էլ Քեզ չը վշտացնեմ, և Քեզի պատճառած տրհաճութիւններիս սիրով փոխարինութիւնն անեմ։

Ո՛վ ամենասուրբ Կոյս, երկնքի Հրեշտակներ ու Սրբեր, շնորհակալ եմ Ձեզանից ինձ օգնելուդ համար, Դուք էլ իմ փոխարէն շնորհակալութիւն մատուցէ՛ք Աստծուն՝ Իւր ինձ արած ողորմութեան համար, և ընդունեցէ՛ք ինձ համար բարուն մէջ յարատևելու և առաջանալու շնորհքը։

Հայր մեր. Ողջոյն Քեզ Մարիամ. Փառք Հօր. Ո՛վ Աստծու հրեշտակ։

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ

Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, հաստատապէս հաւատում եմ, որ Դու Մարմնովդ, Արեամբդ, Հոգւովդ ու Աստուածութեամբդ իսկապէս ներկայ ես գտնուում այս ամենասուրբ խորհրդի մէջ։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՆ

Ո՛վ Տէր, երկրպագում եմ Քեզ այս խորհրդի մէջ, ու ճանաչում եմ Քեզ իբրև իմ Արարիչս, Փրկիչս, գերագոյն Տէրս, ծայրագոյն ու միակ Բարիքս։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Տէ՛ր, արժանի չեմ որ գաս իմ սրտիս մէջ, այլ միայն մի խօսք ասա՝ ու կը փրկուի իմ հոգիս։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂՋՄԱՆ

Տէ՛ր, զարշում եմ բոլոր մեղքերիցս որոնք անարժան են դարձնում ինձ՝ Քեզ սրտումս ընդունելու, և առաջադրում եմ

Քո շնորհքովդ էլ նրանց չգործելու, նրանց առիթներից փախչելու և նրանց վրայ ապաշխարանք անելու։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՈՅ

Տէ՛ր, յուսով եմ որ Դու այս աստուածային խորհրդի մէջ Քեզ բոլորովին ինձ տալով կ'ողորմիս իմ վրայ և կը պարգևես ինձ այն շնորհքներն, որոնք հարկաւոր են հոգուս Փրկութեանը։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ

Տէր, Դու անհուն սիրելի ես, Դու ես իմ Հայր, Փրկիչս ու Աստուածս, դրա համար Քեզ ամէն բանից վեր եմ սիրում, Քո սիրոյդ համար իմ ընկերոջս էլ սիրում եմ իմ անձի պէս ու սրտանց ներում եմ ինձ վշտացնողներին։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՓԱՓԱՔԱՆԱՑ

Ջերմ եռանդով փափաքում եմ, Տէ՛ր, որ իմ սրտիս մէջ գաս, որպէս զի բնաւ չը բաժանուեմ Քեզանից, այլ ապրեմ միշտ Քո շնորհքիդ մէջ։

ՀԱՄԱՌՕՏ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ

Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, ես հաւատում եմ որ Դու ճշմարտապէս մարմնով, հոգով, Արեամբ ու Աստուածութեամբ սրբոտումս ես, և աւելի հաստատապէս հաւատում եմ այդ բանին քան թէ ~~հենց իսկ~~ աչքերովս տեսնէի։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՆ

Ո՛վ Յիսուս իմ, երկրպագում եմ Քեզ որ ներկայ ես սրտումս, միակցում եմ ամենասուրբ Կոյս Մարիամի Հրեշտակների ու Սրբերի հետ, Քեզ արժանապէս երկրպագելու համար։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Տէր իմ Յիսուս, շնորհակալ եմ Քեզանից իմ սրտիս մէջ գալուդ համար։ Եւ Դու, ով ամենասուրբ Կոյս Մարիամ, Հրեշտակդ իմ պահապան և դուք երկնքի Սրբեր, իմ փոխարէն շնորհակալութիւն մատուցէք Յիսուսին։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս, Քեզ սիրում եմ բոլոր կարողութեամբս ու փափաքում եմ այնչափ սիրել, որչափ որ արժանի ես: տուր որ ամեն բանից վեր սիրեմ Քեզ հիմայ և ամբողջ յաւիտենականութեան մէջ

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՆԻՒՐՄԱՆ

Ո՛վ Յիսուս իմ, Դու Քեզ բոլորովին ինձ տուիր, ես էլ ահա ինձ Քեզ եմ տալիս, Քեզ եմ նուիրում սիրտս ու հոգիս, Քեզ եմ ընծայում բոլոր իմ կեանքս, և ուզում եմ Քոնը լինել մինչև յաւիտեան:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՈՅ

Յիսուս իմ, հիմայ որ եկել ես սրտիս մէջ. յոյս ունիմ որ այլևս ինձանից չես բաժանուիլ այլ միշտ հետս կը մնաս աստուածային շնորհքով:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԻԱԾՔԻ

Ո՛վ Յիսուս իմ խնդրում եմ տուր ինձ բոլոր այն հոգևոր ու մարմնաւոր շնորհքներն, որ ճանաչում ես թէ օգտակար են հոգուս. օգնիր իմ մեծաւորներիս,

ծնողներիս, բարեկամներիս, բարերարներիս ու քաւարանի սուրբ հոգիներին:

Հոգի Քրիստոսի սրբեա զիս. Մարմին Քրիստոսի կեցո զիս. Արիւն Քրիստոսի արբեցո զիս. Ջուր կողին Քրիստոսի լուա զիս. Զարշարանք Քրիստոսի զօրացո զիս. բարերար Յիսուս լսուր ինձ, ի վերս քո ծածկեա զիս և մի թողուր զիս մեկնել ի քէն, ի չարասէր թշնամւոյն զերծո զիս, և հրամայեա ինձ գալ առ Քեզ, օրհնել զՔեզ ընդ սուրբս Քո յաւիտեանս. ամէն:

Հայր մեր, Ողջոյն Քեզ Մարիամ, Փառք Հօր ևն.

ՑԱՆԿ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՂԱՇ ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ.

Գլ. Ա.—Մեր սուրբ Հաւատքի գլխաւոր ճշմարտութիւնները 1
Գլ. Բ.— Քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր մասերը 6
Գլ. Գ. — Հաւատոյ, Յուսոյ և Զղջման վերգործութիւններ 11

ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴՊԵՏՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ:

Գլ. Ա.— Սուրբ Խաչի նշանը . . 14
Գլ. Բ.— Աստծու Միութիւնն ու Երրորդութիւնը 18
Գլ. Գ.— Աստծու Որդու Մարդեղութեան դրայ 22
Գլ. Դ.— Աշխարհի կատարածին Յիսուս Քրիստոսի գալստեան ու առանձնական և սգհանրական Դատաստանների վրայ.27
Գլ. Ե.— Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցու.— Մեղքերի թողութեան ու Սրբերի հաղորդութեան վրայ 31

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Միակ գլուխ.

Աղօթքի վրայ 35

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԾՈՒ ՊԱՏԻՐԱՆՆԵՐԸ:

Գլ. Ա.=Աստծու պատիրաններն ընդհանուր կերպով նկատուած 39
Աստծու պատիրանները մասնաւոր կերպով նկատուած 41
Գլ. Բ.— Եկեղեցու պատիրանները 50
Գլ. Գ.— Մեղքը. 55

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Գլ. Ա.— Խորհուրդներն ընդհանուր կերպով նկատուած 60
Գլ. Բ.— Մկրտութիւնը 63
Գլ. Գ— Դրոշմը 6

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Գլ. Դ.—Յիսուս Քրիստոսի իսկական ներկայութիւնը Հաղորդութեան մէջ . . 72

Հաղորդութեան վախճանը և արգասիք
ները 76
Լաւ հաղորդելու համար պահանջուած
պատրաստութիւնները և հաղորդելու
պարտաւորութիւնը 77
Պատարագի սուրբ զոհը 80

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ.

Գլ. Ե.— Այս խորհուրդը լաւ ընդունելու
համար պահանջուած տրամադրութիւնները
ու մասնաւորապէս խղճի քննութիւնը, 83
Զղջումն ու առաջադրութիւնը . . 84
Խոստովանութիւնը կամ մեղքերի ամբաս-
տանութիւնը 88
Արձակումն ու ապաշխարանքը . . 91
Գլ. Զ.— Վերջին օծումը 92
Գլ. Է.— Քահանայութեան կարգը . 94
Գլ. Ը.— Պսակը 96

ՄԱՄՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ԱՍՏԻԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Միտկ Գլուխ.— Հաւատքը 98
Յոյս 101
Սէրը 101

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL042572